



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

Ann. g. 34

d Co. Ltd.

r Wharf,

Essex.

Ն Ե Ր Բ Ո Ղ Ե Ա Ն

Ի ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՈՒՆՍՆ

ԵՒ ՎԱՐԳ

Ս. ԻՇԻՍԱՆՅՆ ՍԱՀԱԿԱՅ

Ե Ի

ՀԱՄԱԶԱՍՊԱՑ

252
110

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ռ 3 Գ

Arms. g. 34

ሀ በ ቀ ኑ ሰ ቶ

ኒ ሀ ፀ ካ ሀ ካ ሀ ኔ ቶ

ቶ.

ՍԻՍԻԱՆՈՍԻ
ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ
Ն Ե Ր Բ Ո Ղ Ե Ա Ն
Ի ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՈՒՆՍՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի Տպարանի Մխիթարեանց

Ռ Ե Գ - 1854

ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍԻՍԻԱՆՈՍԻ

ՎԱՐԴԱԳԵՑԻ

ԽՕՍՔ ԱՍՏՑԵԱԼ ՅԱՄԵՆԱԺՈՂՈՎ

ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ԳԱՌԱՄԵՒԾՆ

Ի ԽԵՂՐՈՑ ԺՈՂՈՎՈՅՆ

Ի ՆՄԻՆ ԳԱՂԱՔԻՆ ՍԵՐԱՍՏԻԱՑԻ

ՅԵՎԵՂԵՑԻՈՂ ՍՐԲՈՑ ԳՐԱՌԱՄԵՒԾՆ

ԵՒ Ի ԽՈՐՀԱԿՈՒ ՍՐԲՈՑ

ԳՐԱՌԱՄԵՒԾՆ ԳՂՈՂՈՎՈՅՆ





ԶՄԵԾ գթութիւնն Աստուծոյ և զմարդասիրութիւնն ածել միշտ զմտաւ հրաման ընկալաք յաստուածաշունչ գրոց, և զգոհացողականն հատուցանել օրհնութիւնս: Եւ յաւէտ պարտական դտանել առ սէր արարչական խնամոցն յամենայնի բարեբանութեամբ գոհացող լինել զԱստուծոյ և զՀօրէ, և երբէք ոչ մոռանալ. յայժմոլս զապագայիցն տեսութիւնս ՚ի միտ առնուլ քրիստոսական հանճարով, և որ լինելոցն է մեզ պայծառութիւն նորոգական կենացն. զոր ծածկեալ Քրիստոսիւ առ Աստուած իմանամք հաւատովք. և նայեցողութիւն մեր հոգւոյ աւամբ յայտոսիկ կացցէ վերամբարձեալ. զի յորժամ յայտնեսցի յուսալին մեր կեանքն Քրիստոս, յայնժամ և մեք ընդ

նմա երեւեսցուք երկնաւոր փառօք, նորին պարգեւեալ մեզ զայս սոսիկ՝ 'ի մեզ զնորայն տեսանն զփառս : Եւ այսոքիկ ասացեալք ոչ երկբայելի և ոչ յերկուանալի այլ ստուգութեամբ և հաւաստիքանգի նման նմա եմք լինելոց վասն զի տեսանելոց եմք զնա ոչ պէս և էն, ըստ Յովհաննու առաքելոյն խրատու :

Բայց այժմ, եղբարք, զմարմնո նորա զառաջին գալստեանն զսկ և զողորմութիւն և զփրկութիւն զչնորհան՝ որ 'ի մեզ պարգեւեցաւ հաստատուն հաւատով 'ի հոգի մեր ընկալեալ, արժանապէս զգահացողականն փառատրութիւն փութասցուք վերառաքել, համկրօն խոստովանութեամբ զպտուշքթանց մերոց պատարագ օրհնութեան յամենայն աւուրս յամենայժամ յարատեւակ հանգիսիւք, հինապազորդ օրհնութեամբ, մաքրազարդ և արդարախոհ ճանապարհորդութեամբ 'ի մարմնական կեցազս. օրինակ մեզ ունելով զհա

Բարեկամ Նատուծոյ զսրբազան
 Երեմիայի, զառաքինի վարուչ
 Երեմիայի և զյաղթող վկայան
 Երեմիայի Նատուծոյ մերոյ, որք
 Երեմիայի խաչելոյն վասն մեր,
 Երեմիայի և պէսպէս չարչարանօք և
 Երեմիայի կատարեալք հասին 'ի
 Երեմիայի յոյսն իւրոց հաւատացե-
 ցանք, և եղեն բարեխօս ամենայն աշ-
 խարհի : Հոտ կենաց եղեալ տիեզե-
 յոյ յաստուած գիտութիւն լուսա-
 յոյցին, զճենճերազոհ 1 մահա-
 յոյց կռապաշտութեան՝ հոգւոյն
 յամով հալածեցին : Եւ արդ նո-
 յի բարեխօսութեամբ պահպա-
 նելք յԱստուծոյ հասեալ ժամա-
 նեցաք 'ի հրաշալի և 'ի մեծապայ-
 տօն վայելուչ և գեղեցիկ, ցանկալի
 ժափագելի տօնս փառաւորեալ
 մեծանուն վկայիցն Քրիստոսի
 յոյց Քառասնիցն : Զայսոսիկ
 Երեմիայի կատարելով զտօնախմբու-
 չեցան 'ի սոցայս հռչակելի և բազ-
 նաւաւ տիեզերագոչ և յոքնե-
 ցան 2 սրբազան և մեծապատիւ
 հասանել արժանաւորեցաք :

Վասն որոյ 'ի սկիզբն բանից մերոց և գովեստի սրբոցն , փառք ամենատեառնն կենարարին մերոյ և գոհութիւն 'ի սոցայս յիշատակի . որ զմեր նուաստութիւնս արժանաւորեաց յայսպիսի հասանել հանգիսի սրբոցն լուսաւոր օր վկայութեան 3 , և ընդ հրեշտակս պարել հոգեւոր երգովք , աստուածեան լուսով արփիաւորեալ , մտօք արթնացեալ , զհոգւոց մերոց մաքրել զտեսարանս : Առողջ և յստակ հայեցուածովք զսոցայս տեսցուք զնահատակութիւնս . որպէս անգէն իսկ աչօք առ նոսա լինելով յասպարիսի առաջի դատաւորին և լսել զհարցումնն և զպատասխանինն մինչեւ 'ի վախճան ճգանցն պատերազմին և յաղթութեանն : Ամենայնի տեսող լինիցիք հոգեւոր աչօք , և մարտակից նոցունց չարչարանացն վշտակցութեամբ . միաբանութեամբ հաւատոյն ընդ նոսին գտանել և աշխատել տարժանմամբ վստակոցն , որպէս զի և վարձուցն հանգիպել յօրն Քրիստոսի :

Եւ արդ իմ զհարկ խնդրոյ ձեր
 ընկալեալ և զանարդամեծարու-
 թիւնդ 'ի վեր քան զարժանն իմ,
 խօսել 'ի տօնի մեծափառ սրբոց քա-
 ռասնիցն, ոչ զլս արժանի վարկա-
 նելով նոցա արժանաւորս ինչ ա-
 սել բան, այլ վասն արժանաւորու-
 թեան խնդրողացդ և հնազանգու-
 թեան պատուիրածին յառաջ բե-
 րից զլմս տկարութեան խօսս լե-
 զուի : Զնոյն զձեր արժօնս օգնա-
 կան ունելով իմ ումս անզօրութեան,
 և զնոսին վկայան պատուականս բա-
 բեխօս առ Աստուած տուիչն պար-
 գեւաց բանից բանաւորացս . զի և
 ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ
 իմոյ, խօսել զօգուտն հոգւոց 'ի
 յիշատակի փառաց սրբոցն : Եւ այ-
 տուհետեւ յիշմամբ անուանց նոցա
 ըստ իւրաքանչիւր անուան գրոյ ա-
 ճեալ ասացից, յառաջնմէն ակսեալ
 մնչեւ ցվերջինն անուանց քառաս-
 նից սրբոցն : Եւ գուք ունկնդրու-
 թեամբ լուարուք հոգւով հեղու-
 թեան, հաւատով ընկալեալ ըզ-
 անբմն բանից 'ի Քրիստոս :

ՆԵՐԲ . Ի Ս . ԳՆՈՇՍ . 2 .

Դառնութեամբ մաղձի չարեօք
 աւլցեալ գժնդակն 'ի Թագաւորոյ
 Լիկիանէս, հահառակն եկեղեցւոյ
 Քրիստոսի և քրիստոնէից հաւա-
 ծանս յարուցանէր, խաղայր, խը-
 դայր չարեացն խորհրդածուն, նա-
 րագոյն տանջանարանս գտանէր,
 տայր հրաման գատաւորաց ընթա-
 նալ ընդ աշխարհս իւրոյ տէրու-
 թեանն, զքրիստոնէայան տանջել
 չարաչար հարուածովք: Ո՛վ մոլ-
 րութեանն. հրապուրեալն 'ի գե-
 ւաց հաստատութիւն հզօր զայս հա-
 մարէր իւրոյ Թագաւորութեանն,
 ցանկայր արեամբ սրբոցն զերկիր
 ընդ. կատարեալ է չարեացն գտա-
 լինէր, և անուն առնոյր գից բարե-
 պաշտ 5 լինել. զարգարէր զկուռ-
 զօրանայր չարեօք, խրոխտայր, գ-
 ուայր, գոչէր, ընդգէմ Քրիստոսի
 հակառակ խորհէր աւերմամբ եկե-
 ղեցւոյ: Մեծամեծացն տայր պ-
 տուէր. Մի գաղարէք սպանան
 զքրիստոնէայան զորս գտանէք.
 րելի իմ նա է, որ զհրամանս
 կատարէ, և զհակառակս աստու-

ծոցն մերոց խապառ կոտորէ . իսկ որ ընդդէմ հրամանաց մերոց լինիցի , բազում տանջանօք չարչարեացի և կորիցէ :

Եկն եհաս այնպիսի հրաման հրովարտակաց յամենայն գաւառս և 'ի քաղաքս . ծաւալեցաւ , տարածեցաւ , փութով հասաւ յամենայն տեղիս առ գատաւորս և իշխանս , և շինեցաւ պատերազմ մոլեկան ճ թագաւորին կոտորել զիւր զօրան անխնայօբար : Տեօանէք , եղբարք , զազէտիցս տարուկուսանս առ քրիստոնեայս և զՔրիստոսի ներողութիւնն : Նեզութի տանջանացն բազմանայր . և սէր նահատակացն բորբոքէր առ Քրիստոս . խոցումն և խողխողումն սրբոցն խստանայր , և խաչին խորհուրդ հաւատով պայծառանայր : Դիւարնակն Լիկիւանէս ցնծայր 'ի կռոցն պաշտօն , և դեւք սարսէին 'ի նահատակացն հալածեալք : Ի յայսմ ժամանակի քառասուն վըկայքս միահաւատ , քրիստոսակրօն , միագունդ զօրականք 'ի կապագո՞վկեցւոց գաւառէն Գամրաց 'ի

միասին գասեալք, միաբան սիրով
 ընդ միմեանս յարմարեալք, բանիւք
 և գործովք՝ ի Քրիստոս հաւատոցն
 միախորհք: Արդ սոքա ըմբռնեալ
 լինէին ՚ի նմին ժամանակի վասն
 Քրիստոսի հաւատոցն և խոստովա-
 նութեան յանօրէն գատաւորէն Սե-
 բաստիոյ քաղաքին, որ զքննութիւն
 այնմ կողման հաւատացեալ ունէր:
 Ժամ գտեալ յատենի կացուցանել
 զճշմարիտան 7 զայնոսիկ՝ հարց և
 փորձ առնէր վասն հաւատոցնոցա .
 բռնադատէր ապա զնոսա հաւա-
 նել և զոհել աստուածոցն:

Նոքա այնուհետեւ խոստովա-
 նէին զՔրիստոս միայն ճշմարիտ Աս-
 տուած . համարձակութեամբ տալ-
 ին պատասխանի, ոչ զանգիտէին ՚ի
 ցամամէ, ոչ ցանկանային պա-
 տուոյ . արհամարհեալ լինէր մե-
 ծութիւն . տանջանք ոչ զարհուրե-
 ցուցին . խօսք ողորանաց ոչ պատ-
 րեցին, գառնութիւն գիմաց գա-
 տաւորին ոչ երկեցոյց . յոյս նոցա
 հաստատուն էր որպէս լեառն
 Սիոնն անսասանելի: Ո՛վ պայծառ

տեսութեան արդարոց անձանց
 փաճայնութեան . քառասուն թը-
 ւով լեալ անձինք 8 , 'ի մի բերան
 տային պատասխանի . Քրիստո-
 նեայք եմք , Քրիստոսի ծառայք :
 Բարբառ ամենեցուն մի լեալ , վառն
 զի յոյսն ամենեցուն մի միայն Քրիս-
 տոս . ըստ նմին և բարբառ նոցա
 միաբան ելանէր . քաջալերէին զմի-
 մանս անշարժ կալ յիւրեանցն
 փրկիչ դաւանութեամբ : Սիրելի է
 ինձ յայսմ վայրի հանգիսանալ
 անյագաբար զնոցայն յեղյեզուլ ըզ-
 բանիցն ասացուած . իմաստասիրա-
 բար 9 զնոցա սէրն որ առ Քրիստոս՝
 տեսանել . 'ի մի միաբանութիւն հա-
 ւատոց գործովք յանգիման կա-
 ցեալ Քրիստոսի , բիւրապատիկ բա-
 րութեանց եղեն մեզ առիթք , մա-
 քրեալք զհոգւոց մերոց մթացուցիչ
 խորհուրդս համակամ իւրեանց ա-
 ղութիւք :

Կապեցին ապա զսուրբան և ար-
 կին 'ի բանգ թերեւս ահացու-
 ցեն 10 զնոսա , այլ նոքա անգրգուե-
 լի յուսով յօգնտկանութիւն զԱս-



տուած կարդային , աղօթս ձիգս և
յերկարս մատուցանելով . զի տացէ
նոցա յաղթել¹¹ չարին խորհրդոց ,
և ցանկային մեռանել վասն հաւա-
տոցն Քրիստոսի խոստովանու-
թեամբ՝ յուսոյն կենաց ակն ունե-
լով : Իբր նոքա յայն մաղթանս յոր-
դորագոյնք էին հառաչմամբ սրտից ,
երեւեալ նոցա փրկիչն քաջալե-
րեաց հաստատուն կալ : Որոց տե-
սեալ զտէր միաբան սիրով յօժա-
րագոյնք ըղձանային վկայական առ-
նուլ անուն և թողուլ յիշատակ
քաջութեան . բերկրալի ձայնիւ
սաղմոսէին , երգ հոգեւոր հօր 'ի
բարձունս առաքելով : Ի՞ծ գտեալ
անձանց զօրութեանց զտէրունական
երեւումնն , եւս առաւել հաստա-
տագոյն յուսով յայտնապէս խօ-
սէին զիւրեանց քաջութիւնսն 'ի
մարտ սլատերազմի առաջի մարմնա-
ւոր և մահկանացու թագաւորաց
առանց բաժանման մնալ և յայնմ
հանգիսի : Բաբունաբար յառաջ
բերեալ զբանս վարդապետէին մի-
մեանց . որպէս յայնս , ասեն , յազ-

Թեցաք և երեւելի գտաք, սապէս
 և յայսմ՝ յաղթեսցուք և առցուք
 գովութիւնս յանմահ թագաւորէն
 մերմէ . շահեսցուք ապա և զարքայ-
 ութիւնն, միաբան մարտիցուք և
 ըստ օրինի, զի պսակեսցուք:

Իբրեւ անցանէին աւուրք ինչ 'ի
 վերայ, միւսանգամ ստեան գնէր
 գատաւորն . յաւելոյր և ժողով տե-
 սողացն . քանզի անդ հասանէր և
 գուքսն : Սուրբքն ածան առաջի
 անտրտում և զուարթ երեսօք իբր
 'ի մեծ ուրախութիւն . խորհուրդք
 նոցա լի ազօթիւք և սրտիւք յերկինս :
 Ղամբար վառեալ զհաւատոցն ճը-
 րագ 'ի ձեռս 12 իւրեանց ունելով,
 զի լոյս տայցեն տեսողացն հոգւով
 զնոցա ճգանցն տեսակ : Այսու
 գիմօք կացեալ յատենի, 'ի հարցա-
 նելն զնոսա զնոյն ապին պատաս-
 խանի զոր յառաջնում նուագին,
 զՔրիստոս խոստովանել և ոչ ուրա-
 նալ զնա բնաւ : Ուստի և յանդի-
 մանեցին աստուածիմաստ բանիւք
 զանոսի նոցա պաշտամունս գեւս
 անուանելով և կուռս, և զնոսին գի-

ւապաշտս և մոլորեալս , նաեւ խա-
 ւարեալս , և առանց լուսոյ , մտռախ-
 լասպատս և միգազգածս , անաս-
 տուածս և մոլեգնեալս , և բնաւ իսկ
 անիմաստ մոլորութեամբ քարքա-
 ջեալս : Սրբոցն զայս ինչ համարձակ
 խօսեցեալ , սաստ սպառնալեացն
 շարժեցաւ , այնուհետեւ հրամայե-
 ցաւ սպասաւոր զօրացն ամպարըշ-
 տաց հարկանել քարիւ զբերանս
 նոցա և խորտակել : Իբրեւ սկսան
 քարաձիգ լինել 'ի վկայսն , զմի-
 մեանս քարկոծէին : Ո՛վ զարմանա-
 լեացն . զնօսա կարծելով 13 խոր-
 տակել՝ ինքեանք ընդունէին զհա-
 րուածսն : Այսպէս հրաշագոր-
 ծեալ Աստուծոյ , զի անդէն 'ի ծոցս
 իւրեանց ընկալցին զհատուցումն
 եւթն չարեացն եւթնպատիկ : Ո-
 րով զչարեալ և գուքսն ցասամբ ,
 առեալ վէմ կամեցեալ հարկանել
 զսուրբսն , յերեսս գատաւորին գի-
 պէր և ջարդեր զանամօթեալն լըր-
 բութեամբ 'ի պաշտօն գիւացն :
 Հիւթիւ Հոգւոյն այսոքիկ գոր-
 ծիւր , զի յամօթ լիցին ոք չարիս

նիւթէին օթեղանայն հողւոյն սրբ-
 բոյ . որպէս հուրն Բաբելոնի երկց
 մանկանցն ցողագին լինէր . իսկ ըզ-
 քաղցէացիան այրէր և բորբոքէր ,
 այսպէս և այժմ գործեցաւ : Յորս
 ձգէին քարինս՝ նոքա անմնասք , և
 քարածիգքն 14 քարավէժ լեալ .
 իսկ գունգն սրբազան լի խնդու-
 թեամբ և զուարճ տեսլեամբ : Աւեր
 առաքելին այնուհետեւ զգոհու-
 թիւն և ասէին . Թշնամիք մեր տկա-
 րացան և անկան , այլ միք յարեալք
 և ուղղութեամբ ապրեցաք : Արդա-
 րեւ կատարեցաւ երգն Դաւթի .
 Սուրբ նոցա մտցեն 'ի սիրտս նոցա
 և աղեղունք նոցա փշրեցան : Այլ
 սրբոց աղօթքն վերամբարձեալ լու-
 սով 'ի յերկնուստ առյցեալ լի-
 նէին , և մնացին հաստատուն 'ի հա-
 ւատս :

Արգ իբրեւ այս այսպէս լինէր ,
 գարձեալ արկին զնոսա 'ի բանգ , 'ի
 բանգին մարմնով արգելեալք և
 հաւատքն անարգել և անխափան
 լինէր 'ի հողւոջ նոցունց . քանզի
 առաւել եւս խնդութեամբ ազօ-

Թէին և անվեհեր զմիմեանս արիա-
բար քաջալերէին : Ղուզեալ զխոր-
հուրդս մտաց իւրեանց անխոնար-
հելի , 'ի վեր ամբարձեալ յերկինս
առ Աստուած հայեցողութեամբ 15
ջրոյն կենաց փափագելով ջանային
ջերմեռանդն սիրով ընդ Քրիստո-
սի լինել . և Թեթեւ Թուեր յաչս
նոցա առժամանակեայ նեղութիւն
մարմնոյ տանջանաց : Եւ իբրեւ նո-
քա զայն ցանկային և խնդրէին ,
գարձեալ յայտնապէս երեւեր նո-
ցա տէր Յիսուս և ասէր . Ամնայն
որ հաւատայ յիս , Թէպէտ և մե-
ռանի՝ կեցցէ . քաջալերեցարուք ,
և մի երկնցիք , ես ընդ ձեզ եմ . չար-
չարանքդ առժամանակեայ են , այլ
հատուցումն վարձուցն զոր ես տաց՝
յաւիտենտեան : Սակաւ մի , ասէ .
համբերեցէք և ընկալիք զանթա-
ռամ փառաց պսակն . բազմականք
պատրաստեալ են ձեզ 'ի տան Հօր
իմոյ 'ի սկզբանէ աւուրց աշխարհի .
'ի յերկրի նահատակիք և 'ի յեր-
կինս պսակիցիք . մեծամեծս ընդ
փոքուգ վարձատրեցից ձեզ , ով սի-
րելիք իմ :

Եւ ապա երջանիկն դաս ծանուցեալ զհաւատոցն պայման, շնորհալից ցնծութեամբ զաւետեացն առեալ հրաւեր 'ի տէր աւետեացն տային զյոյսն : Երկին զբանդն էր տեսանել . հրեշտակս մարմնաւորս զարգելեալ սուրբս 'ի բանդին . փառք 'ի բարձունս էր բարբառ հասարակաց բանաւոր ուրբ գնդին : Իւսեալ ընդ միմեանս հոգեզարդ միութեամբ հոգւովեռաց 16 հաւատոցն հետեւմամբ, անխախուս մնալ հայցէին յԱստուծոյ յոր կոչեցանն կոչումն վկայական հանդիսին . եռահրաշ զինու վառեալ յուսով սիրով և հաւատով, կենօք և մահու կենարարին ընծայեալ բոլորապտուղ պատարագ : Տեսցուք աստանօր զաստուածազան խոստովանութիւնն արգարախոհ մտօք և նմանեսցուք այսպիսեաց վարդապետացս . տացուք և միք զկեանս մեր Աստուծոյ . գոհացուք և յետ մահու . մի արամեալ յուսահատեսցուք՝ որովք առաք օրինակ զկաարելոցն : Պայծառապէտ 'ի մեծ ա-

Կկատէր ապա յետ բազում անօ-
 թոց տանջանտցն և գտանէր զգլխն
 դակն՝ ի մահարարս : Գիշեր մի պարզ
 և ցուրտ գառնաշունչ օգով սասա-
 կասառոյց, որ յոլովագոյն 19 և նոր
 եհաս այնմ աւուր . ի նմին աւուր
 ընդ երեկս ի մուտ գիշերոյն կա-
 պեալ զամենեանն ի միասին մերկօ
 զսուրբան, արկանէր ի լիճ մի ծո-
 վու մերձ ի քաղաքն : Աստանօր
 ճմլի սիրտ իմ և աչք իմ լի արտա-
 սուօք լինի, նա և լեզուս տկարանայ
 առ ի պատմել զայնպիսի ազէտս
 տանջանաց սրբոցն Աստուծոյ . սու-
 կամ ամենայն անգամօքս և այլայլի
 միտք իմ յասել զգառն չարչարա-
 նաց բանսն : Արեգակն զտուրն-
 ջեան ընթացքն կատարէր . գիշերն
 խաւարաբեր և օրակուլ սփռէր
 ծածկէր զաշխարհս . սաստկանայր
 գառնութիւն օգոյն առ հասարակ
 ի միասին ժողովէր գժնիկն : Իսկ
 պապէր այնուհետեւ ջուրքն . սառ-
 նամանիքն ջուրջ պատեալ զերանե-
 լեօքն մածնոյր ընդ մարմինսն, պըն-
 գէր պարպատէր ճարճատումն 20

ոտկերացն առնէր, արիւնն հոսէր
 զտակաբար իբրեւ զյորգահոս ազ-
 բէւր . ներկէր ապա ջուրքն զանսո-
 վորն գոյն՝ 21 կարմիր, հիւսիւսային
 հողմն հնչէր եղեմնարկու 22 և
 արտաուարեր 23 . հեղոյր 'ի վերայ
 Բերկ մարմնոցն : Պատառէին մար-
 վնքն, պաղէր արտաքուստ, և ջեր-
 մու թիւնն նուազէր 'ի ներքուստ,
 անտանելի էր ամենայն իրօք, ողոր-
 մելի էր և տեսութիւնն, սարսափելի
 էր և տանջանք : Քաջ նահատակքն
 զմիմեանս յորդորէին, ձայն զուարթ
 իրերաց ձայնէին . Պինդ կացցուք,
 և զբարք, մի վհատեսցուք, մի երկի-
 ցուք, մի զխորհուրդս խոտորես-
 ցուք, միաբան մարտիցուք . մի դառ-
 նութիւն տանջանացս զարհուրե-
 ցուսցէ, մի՛ պաղելլս մարմնոց մեզկա-
 ցուսցէ զհոգիս մեր, 'ի յօգնութիւն
 զԱստուած կարդասցուք, ոչ թու-
 գու զմեզ . փոխանակեսցուք զա-
 թիւնս ընդ արեանն Քրիստոսի . տա-
 ցուք զմեզ փոխարէնս մահու նորա .
 հոով կիզցի մարմինս մեր պատա-
 ճադ՝ հրով հոգւոյն վառեալ . սէրն

մեր առ Քրիստոս ջրով մխեսցի,
տրոհեսցի մարմինքս, հեզցի արիւնս.
միայն հաւատն մեր կացցէ անշար-
ժելի յուսովն : Որպէս էպքն միա-
բան 'ի կեանս, և 'ի մեռանելա փ-
որոշեսցուք 24 . կացցուք միաբան 'ի
անշանս, զի զպսակն առցուք . փ-
յազլթեսցէ սատանայ քառամանիցս՝
որ մարանչի ընդ մեզ իւրովք խոր-
հըրդակցօք . այլ մեք յազլթեսցուք
նմա և փախստական արասցուք ա-
մօթալի : Սրբոցն այս էր խրատ առ
միմեանս և ալօթք առ Աստուած,
և տանջանքն այն տագնապիլի և
տարակուսանք, և ցաւք անըմբերե-
լի . այլ նոքա անսասանելիք և ան-
խառովելիք 25 մնային : Ամենայն ուռ-
տեք տագնապ, հոզմն դառնաշունչ
և ջուրքն սառամանիք 26 . և նոքա
'ի մերկութեան : Իսկ սրբոցն սէր
անարտախղելի 27 առ յուսալին իւ-
րեանց :

Եւ իբրեւ այնպիսի ցրտութիւն
առաջին պահ գիշերոյն խստու-
թեամբ զօրանայր, մին 'ի նոցանէ
որում անուն կոչեցից 28 թշուա.

ևական և տպաշնորհ, արտաքս ելա,
 նէր 'ի սուրբ գնդէն, առ չժուժել
 նեղութեան տառամանեաց անկա-
 նէր 'ի բաղանիսն զոր չարահնարքն
 էին պատրաստեալ վասն այնպիսի
 պատրանաց . և առժամայն լու-
 ծեալ հալեցաւ մահուամբ: Աիրա-
 ւորեցաւ մարմնով և չարգարա-
 ցաւ հոգւով . կորեաւ մարմնով
 և ոչ գտաւ հոգւով. չարչարեցաւ
 և ոչ պատուեցաւ 29 : Այսպիսի
 է անժուժիցն հանդէս . այսպէս և
 ծուլիցն վիճակ . աւանդ բախտին .
 արտասուելի է և սորայս կորուստ,
 և վշտակցելի յողբս և յաշխար 30 :
 Նմա բաւական է պարսաւանաց
 բան իւր կորուստն . այլ 'ի մէնջ
 արտասուք և տպաշաւ և ոչ ծաղր
 զգլորմամբն: Ո՛վ վշտացս, ո՛վ անտա-
 նելի տապոյս . անդ գոլ մտօքս զիս
 տեսանեմ և զվախճան ելիցն նկա-
 տեմ, և նայիմ զտրամութիւն լու-
 սազարդ սրբազանիցն ողորմելի զքնի
 հայեցեալք և ապա 'ի միմեանս գար-
 ձեալ արտասուելից աչօք յոնակից
 լեալ վշտօք վարատեալ ոչխարին, ող-



բային լալա հառաչ բառաչմամբ 31 .
 ոչ այնքան ցաւագին էր սառամա-
 նեացն խստութիւն , որչափ պակաս
 սուսն եղբորն 'ի թուոյն : Ի վեր
 յերկինս զաչս համբարձեալ ար-
 տասուահոս պաղատանօք ձայն աչ
 խարանաց առ բարձրեալն 'ի բարձ-
 ձունս առաքէին ազերսալի մազլթա-
 նօք . զտարածումն ձեռաց առ
 Քրիստոս վերարեբեալ զօգնութիւն
 խնդրէին՝ մի քայքայել 'ի միմեանց ,
 և մի ոլակասել խորհրդական իւ-
 րեանց 'ի թուոյն , այլ մնալ քառա-
 սուն . ընդ Քրիստոսի լինել և պա-
 կել հաւասար միութեամբ : Անցո
 տէր , ասէին , զծառայքս քո . և մի
 'ի գետտ բարկասցիս մեզ , և մի սրբա-
 մտութիւն քո 'ի վերայ ծովու . մի
 կորուսաներ զմեզ և մի թողուր ,
 տէր , յիշեա զխոստումն քո և նայեա
 'ի տառապանս մեր . ողորմութիւն
 քո հովանի մեզ եզիցի , և տանջա-
 նարանս մեր օրհնեացէ զքեզ : Ա
 պրեցո զմեզ , տէր , զի կարգասցուք
 զանուն քո զոր օրհնեն ամենայն ա-
 ռարածք երեւելիք և աներեւոյթք :

Սիրեցաք զքեզ, տէր, 'ի բոլոր սրբ-
 տէ, և զանձինս մեր ընծայեցաք
 քեզ պատարագ, որ օրհնեալք ես
 'ի քո ստեղծուածոց, և քո հրա-
 մանաւ ամենայն ինչ կարգեալ
 կայ 32, և քեզ հնազանդին բնաւ
 գործք քո: Եւ այսպէս 33 բնաւ
 օրհնութեամբ ընդ բոլոր գործս
 Աստուծոյ անցանէին յիշմամբ խո-
 րոց անդնդոց և հոգմոց, կարկառի,
 ձեան և սառին և ցրտոյ և մրրկի
 որք առնեն զբան նորա և կատարեն
 զհրամանս նորա:

Եւ զառաջին նախահարցն յիշէին
 զսքանչելիսն զգործսն լուսափայլ
 խնամոցն որ առ նոսա կատարեցաւ.
 օգնականութիւնն Աստուծոյ որ
 առ Յակովբն փրկեալ յԵսաւայ, և
 զՅովսէփ ապրեցուցեալ ընդ նմա
 վաճառելով, և զՄովսէսին լսել սրբ-
 տագոսչ աղօթից, և առնել նշանս և
 արուեստս և տալ շնորհս, մինչ զի
 ծովահեղձիկ 34 առնել զՓարա-
 ւոմն: Ի նոյնգ՝ որ զայս հրաշագոր-
 ծեցեր, յուսացաք. ապրեցո զմեզ,
 զի մի ընկզմեսցէ զմեզ պտոյտս ջուրց.

օգնեա մեզ, Աստուած փրկիչ մեր,
 զի աղքատացաք յոյժ: Վասն փա-
 ռաց անուան քո նայեա 'ի մեզ, զի
 շուրջ պատեցին զմեզ ստուերք մա-
 հու. թեթեւացո, տէր, զծանրու-
 թիւն օգոյս: Առ քեզ, տէր, կար-
 դացաք. լուր մեզ, զի ծանիցեն աս-
 մենայն ազգք երկրի զփրկութիւն
 Աստուծոյդ մերոյ, և տացուք մեք
 փառս անուանդ քո, զի 'ի քեզ ա-
 պաւինեցաք, տէր Աստուած մեր,
 կեցո զանձինս մեր: Նոքա զայս ա-
 սելով 'ի մէջ այնպիսի վտանգիցն՝
 ահա յանկարծակի զարմանք սքան-
 ջելի և տեսիլ սոսկալի. 'ի նմին ժա-
 մու գիշերոյն ծագեաց շուրջ զնո-
 քօք արեւ, ծագեաց և ծաւալեցաւ.
 ցրտութիւնն դառնայր 35 'ի ջեր-
 մութիւն, և ձմեռն յամառն վազ-
 վազակի փոխիւր. հալեցաւ լուծաւ
 սլաղն, և եղեւ ջուրն ջուր բարիոք
 և ջերմ: Ոչ այնուհետեւ տագնապ
 և ոչ սառնախառն օգ, ոչ հողմ՝ դը-
 ժընդակագոյն և ոչ սիք դժուարա-
 դէսլ, այլ ամառն. ոչ արեգակնա-
 ծագ՝ այլ քրիստոսեան էջք և լոյս

գերագոյն : Սերովբէից Թագաւորն իջեալ 'ի վերուստ տեսանիւր սրբոցն . զաչս 'ի վեր համբարձեալ ձեռամբ մատնացոյց լինէին , յորդորեալք մի զմի 'ի վեր հայէին . Փրկիչն տէր Յիսուս ահա ծագեաց առ մեզ , տեսցուք և զուարճասցուք , ցնծասցուք և բերկրեսցուք . ահա ոչ եւս 'ի ձեռաց եթող զմեզ , այլ եհաս մեզ յօգնականութիւն որպէս յուսացաք : Լոյսս աննման է լուսոյ արեգական . ժամս ոչ է արեւու . արեգակն է Քրիստոս յոյսն մեր որ երեւիս . արդարեւ ծագեաց արեգակն անմտանելի և լոյսն անճառելի :

Արդ իբրեւ այսոքիկ հրաշափառ փայլմամբ արաափայլեալ 36 լինէին 'ի սրբոցն , և գոհութիւն տային Քրիստոսի արթուն և զուարթութուն խորհրդով : Իսկ պահապանքն 'ի քուն կային անպատրաստք , քուն թանձրութեան և հակառակ փրկութեան իւրեանց նիրհեալք . վասն այնորիկ և անտես սքանչելեացն լինէին , և խաւարեալք առ լոյսն :



Բայց մի ոմն որ արթուն կայր ար-
 ժանանայր լսել զաղօթան , և տե-
 սանէր զնոսա ուրախ լեալ 'ի յերգս
 Աստուծոյ : Ի քնին 37 մտանէր , ըզ-
 մտաւ ածէր զմահ անկելոյն 'ի բաղա-
 նիսն և զարմանայր ընդ նոցա կեալն ,
 յայսոսիկ և լուսոյն որ շուրջ զար-
 բովքն՝ տեսութեան արժանաւո-
 րիւր 'ի բացուստ : Ուտի և պսակս
 իջեալս 'ի վերուստ երեսուն և ինն
 զարմանագործ 38 տեսութեամբ 'ի
 միտ առնոյր զպակասեալն 'ի թուոյ
 չհամարեալն 'ի թիւ քառասնիցն ,
 որով և պսակն պակասեալ գտա-
 նէր : Սիրտ նոր ստացեալ՝ սրբոցն
 նախանձաւոր գտանէր . զորս ընդ
 իւր էին զարթուցեալ վնոսա , մեր-
 կանայր զգեստն , ընկենոյր և զհին
 զմարդն , 'ի ներքս վազէր 'ի լիճն
 խնդալով 'ի դասս սրբոցն : Սրբա-
 գոյն սիրով զանուն առնոյր , զբրիւ
 տոնեայ եմն ազազակէր . տէր Աս-
 տուած , 'ի քեզ հաւատամ յոր սա-
 քայս հաւատան , ընկալ և զիս , հա-
 մարեա 'ի թիւ սրբոցս , զի և ես
 գտայց 'ի սոսա : Մեծ խնդութիւն

է ինձ այսուհետեւ, զի թիւս խոր-
հրդահան լցաւ և սատանայ ուար-
տեցաւ. այլ ոչ եւս կարծիս ունիմ
պակաս գտանել առանց լիութեան,
այլ լի և անթերի: Արդ տասցից և
ես վայելչականս և գոհացայց ընդ
սրբոցն. Ով է Աստուած մեծ և հզօր
իրբեւ զԱստուած մեր՝ որ առնէ
սքանչելիս, և կամ ո՞վ է Աստուած
բայց յԱստուծոյ մերմէ՝ որ արար
զայս ամենայն: Բախացայց յոյժ
ուրախութիւն մեծ, զի թիւ քա-
ռասանեկին լցեալ եղեւ և խնդու-
թեամբ լցոյց զորամեալսն, զի այլ
ոչ եւս ոք պատրի արտաքս ելեալ՝ի
բազանիսն: Ապա յետ այսպիսի
պայծառութեան առաւօտ լինէր.
և բռնաւորքն անդր հատանէին, ըզ-
բանգապանն 39 ընդ նոսա տեսա-
նէին և զարմանային. հարցանէին
ապա և զայլսն՝ Գիտէք վասն որոյ
պատճառի զայն արար. և կամ
զինչ տեսեալ իշխեաց յայն մտա-
բերել: Ասացին նոքա զստոյգն.
Չարթոյց զմեզ, ասեն, ՚ի քնոյ և
տեսաք լոյս զնոքոք շուրջ որպէս

զարեւ. դա յանկարծակի վազեաց
 'ի ներքս աղաղակելով քրիստոնեայ
 եմ: Զայս լուեալ՝ զայրանային, «
 տուեալ հրաման քարչել 'ի լճեզն
 և բրօք ջարգել զբարձս նոցա մին
 չեւ իսպառ: Ո՛վ անագորոն մտացն.
 ոչ ուսեալք 'ի բարիս նախանձել,
 այլ 'ի չարիս յորգանախանձք 40:
 Խորտակեցան ամենեքեան և ան-
 խորտակելի մնաց հաւատոյ նոցա
 աներեւոյթ անձինք:

Աքանչելի է յայսմ վայրի պատ-
 մութիւնս. մայր միոյ ուրումն 'ի սըր-
 բոցն անմեկնելի առ նոսա մնայր,
 քանզի մանկագոյն էր և դեռարող-
 բոջ հասակաւ որդի նորա: Քթթել
 ական իւր չտայր թոյլ, այլ ցանկ
 առ նա պշուցեալ հայեր. և ձգեալ
 առ նա զձեռն՝ ասէր խանգա-
 կաթ 41 ձայնիւ և մայրագորով բա-
 նիւք, Քաղցրիկ որդեակ ասելով,
 և քաջալերս տալով. սակաւիկ մի
 համբերեա, ասէ, զի կատարեալ
 լիցիս. և մի երկնչիս, Քրիստոս
 հասեալ է յօգնել: Ո՛վ մայր քաջա-
 հաւատ, ո՛վ զարմանք 'ի վեր քան

զքնութիւն կանացի տկարութեան ,
 նա եւս առաւել : Այսպիսի վայել
 է անունդ հաւատացելոյ մօր , այս-
 պիսի զարգացումն , սոյնպէս և հա-
 ւատք , այսպէս և յուսադրութիւն ,
 ըստ տյամ և քաջալերութիւն առ-
 որգիս : Նա զայսպիսիս ցուցեալ
 մայրութիւն որդւոյն իւրոյ և քաջա-
 լերութիւն . և ամենայն մարց զնոյն
 ուսուցեալ հաւատարմութիւն 42 ,
 որով գովելի լինէր : Թողից զսորա
 գովեստից բան , թէպէտ և բազումս
 իցէ արժանաւոր . նա և քան զմեր
 իմացուածս գեր 'ի վերոյ գտանի ,
 թուի թէ և այլ եւս բազմաց որք
 նայիցին յայս : Իսկ սուրբ վկայքն
 խորտակեալք ջալոտիւք՝ խնդու-
 թեամբ աւանդեցին զհոգիս իւ-
 րեանց 'ի ձեռս հրեշտակաց , ա-
 պրեալք յորոգայթէ որսոզաց ազ-
 թիւք զամէնն առելով : Որպէս լոյս
 լուսաւոր ամպօք յերկինս ամբար-
 ձեալք 'ի հոգիս արդարոց կատա-
 րելոց գրեւոցն յերկինս . կամ 'ի
 ձեռս Աստուծոյ ըստ իմաստու-
 թեանն որ յառաւիյն պատմի : Սոյն-

պէս է իմանալ և այժմ. քանզի
 վայել է իսկ հասանելն արդարոցն
 հոգւոց յայն յոր յուսացան մինչ 'ի
 միւսանգամ միաւորութիւն հոգ-
 ւոց ընդ իւրաքանչիւր մարմնոց :
 Սայլս ապա հրամայեցաւ ածել և
 բառնալ զմարմինս նոցա և տանել
 'ի տեղի այրման . զի զայս ուսոյց
 նոցա սատանայ , կամելով անյայտ
 առնել զյիշատակս նոցա յերկրէ :
 Իսկ զպատանին Մեղիտոն թողին
 անդրէն՝ յուսալով զասրուսա նո-
 րա , զի դեռ եւս կենդանի էր : Այլ
 մայրն տեսեալ մնացեալ միայն և
 բարժանեալ յընկերակցացն , սիրտ
 առն ընկալեալ և զօրութիւն : զտը-
 կարութիւն մոռացեալ , 'ի յուս
 բարձեալ զմանուկն , խնդութեամբ
 ընթանայր . մայր մարտիրոսի ցան-
 կայր լինել , և արագ հասանէր խըն-
 դրոյն : Ի ճանապարհին լուծանէր
 հոգին 'ի մարմնոյն և մտանէր առ
 Աստուած : Ապա մօրն զսուրբ մար-
 մինն տարեալ զկնի սայլիցն 'ի բա-
 նակն մաքուր ընկենոյր անյապազ
 փութով : Նոյնհետայն 43 հուրն

բորբոքէր, մարմինք սրբոցն ողջա-
կէզք կատարեալք 'ի հաճոյսն Աս-
տուծոյ, ջրով և հրով մաքրագոր-
ծեալք, և ամենայն փորձութեամբ
փորձեալք, իբրեւ զարծաթ սրբ-
բեալք և զտեալ, եւթնպատիկ չար-
չարանօքն պարզեալ 'ի հոգոյ. որ-
պէս 'ի դէպ նոցա եկեալ մարգա-
րէին երգ, որ առ բազմապատիկ
քննութիւնսն ասի, որգունակ զի
սոցա է ասել. Փորձեցեր զմեզ,
Աստուած և քննեցեր որպէս ար-
ծաթ զի քննի. և յաջորդօքն եւս
պարծել. Անցաք մեք ընդ հուր և
ընդ ջուր. և դարձեալ ջուր՝ որ-
պէս եղեւ իսկ և տեսաք: Այսպի-
սեօք եւս քան զայս ընկալեալ հան-
դէս և վճիռ:

Սոցին այսոցիկ եղելոց ապա
խորհուրդ առնէին եպերեւելիքն 44
այն ամպարշտացն դասք և չա-
րեացն խորհրդածուքն զանկորուս-
տըն գանձ պատուական օսկե-
րացն այրելոց կորուսանել ջրով
Չանային, որ քան իւրեանցն կարո-
ղութիւն յոյժ խորհրդածեալ. զե-



ւորեալ 'ի գետն մեծ արկանէին ըզ-
 բովանդակն , ոչ ինչ թողեալ ար-
 տաքոյ : Խորհրդաբար ժողովեալ
 զի մի մնացէ մասն առ քրիստո-
 նեայսն՝ որովք առաքինացին .
 զայսոսիկ ունայնախորհուրդք 45 :
 Եւ այսպէս կամեցեալ ծածկել զա-
 թիական քաջ զօրականսն , ինքեանք
 պարտեցեալ և յամօթ լեալ գոր-
 ծակցաւն իւրեանց սատանայիւ՝ որ
 զայսպիսիս մոլէր ընդգէմ սրբոցն :
 Իթ մեծ կարծելով զայս նոցա իւ-
 րեանց անզօրութեանն՝ յազթու-
 թիւն թագաւորական համարելով
 զծածկել նշխարացն , 'ի ջուրս գե-
 տոյն արկանէին : Որք իբրեւ արկան
 անգ՝ ժողովեցան 'ի միասին , բնաւ
 ոչ կորուսեալ և ոչ մի , այլ 'ի միա-
 սին գտեալք , Աստուծոյ զայս այս-
 պէս հրաշագործեալ որպէս և կա-
 թող է . նա և լուսաւորագոյն քան
 զփայլումն աստեղաց ճառագայ-
 թեալ 'ի ջուրսն . և գաւանութիւն
 միութեաննոցա անբաժանելի մնայր
 և յետ մահուն :

Տեսիլ երեւեցուցեալ եպիսկո-

պոռի քաղաքին յետ երկից աւուրց ,
 և ցուցեալ յայտնագոյն նշանիւ
 զտեղին , յորում կային հաւա-
 քեալ արփիափայլ սուրբ ոսկերքն .
 'ի գիշերի երթեալ հրաման տային
 առնուլ յուղից գետոյն՝ և տանել
 հանգուցանել 'ի հօրն դանձարան
 զանապական շնորհն զբժիշկն ախ-
 տաժետաց : Որոյ առեալ սրբազան
 տեսուչն Պետրոս զուխա քահանայ
 ութեան վիճակի , երկեւղիւ բազ-
 մաւ 'ի տեղին հասանէր հանդիպէր
 մեծի փափագմանն լուսոյ : Սրբա-
 պէս ժողովեալ եդեալ 'ի միասին ա-
 ռանց պակասման գտանէր 'ի ճա-
 ճանչ նշողիցն , իւրաքանչիւր տեսո-
 զացն աստեղապէս երեւեալ լու-
 սաւոր զլուրսն առնէին . մի առ մի
 եդեալ անքակտելի սիրով , ամենն
 մի քառասունք անուանիալ , տա-
 րեալ խնդութեամբ յօթեվանս ար-
 գարոց 'ի տունս աղօթից 'ի տաճար
 տէրունի հանգուցեալ : Երգ օրհ-
 նութեան և տօն խնդութեան կա-
 տարեալ խնկաւէտ սաղմոսիւք և
 հոգէշնորհ օրինգք , աւետեաց յի-

չատակ և եկեղեցւոյ փառաց լրումն :
 Լուսափայլ շնորհք զնոյնն կար-
 գել յապագայց ազգաց , օրէն և տօն
 տարեկան հրամանաւորեալ զայտր
 աւուր համաշխարհական խումբս :

Իսկ արդ և մեք վերջացեալք ժա-
 մանակաւ , որ արժանաւորեցաք առ-
 նախմբել և ուրախութեամբ հոգե-
 ւորականաւ զուաճանալ ՚ի յիշատա-
 կի սրբոց քառասնիցն , տեսաք ըզ-
 պատմութի սոցա հանգիսին որչափ
 բաւական եղել մեր տկարութիւնս ,
 և կարճաձօտիւք ասացան ՚ի ձեր
 լսելիս որքան և պատմեցաւս . ոչ
 ըստ նոցսւնց արժանաւորութեան ,
 և ոչ ըստ ձերում փափագման և
 խնդրոյ , այլ ըստ իմ մտացս սակա-
 ւատեսութեանս և փոքրանձնու-
 թեանս յիմաստս : Սիրելիք , արգ-
 տեսցուք և զանուանց նոցա թիւ-
 քառասունն են թուով , ոչ պակա-
 սեալ և ոչ յաւելեալ , զի թէպէտ և
 պակասեցաւ , դարձեալ Աստուծոյ
 տեսչութեամբն լցաւ : Սոյն այս քա-
 ռասուն թիւս բազում խորհուրդս
 ցուցանէ մեզ յինքն բարգեալ : Ետի

քառասնեակ աւուրքք թուով կեն-
 դանանալ յորովայնի իմանալի է
 զմարգն և հոգեւորիլ: Եւ զայո
 է ուսանել 'ի սուրբ հարցն աւան-
 դութենէ. որ և սոքա մեզ կեն-
 դանացուցիչք գաան 'ի ձեռն իւ-
 րեանցն լուսաւորութեան և բա-
 րեխնամութեան: Աերացուք ապա
 և յայլ խորհուրդ քառասնեակ
 թուոյ. քառասուն արուրքք ջրհե-
 ղեզ ապականետլ զանօրինեալն
 առ Նոյիւ գատեցեալ ջրով զհեղեղ
 մեղաց: Իսկ սոքա մեզ ջուր փրկու-
 թեան և ջուր ուրախութեան ծա-
 րաւելեաց 'ի տան տեառն, զի ին-
 քեանք ջրով տանջեալք վասն Քրիս-
 տոսի 'ի ջուրսն հեղձուցին զանմար-
 մինն Փարաւոն: Բախանան 46 և
 արգարոց անձինք այսու քառաս-
 նեակ թուոյ աւուրքք՝ պահօք ա-
 ռաքինացեալք, հոգևով զօրացեալ
 և զմարմինն նուաճեալ. որսէս
 զյօշովս է իմանալ. 'ի Սինէական
 լերինն Մովսէս երկիցս անգամ,
 ուր և աստուածատեսութեանն ար-
 ժանաւորիւր և զպատգամս պա-

առւիրանի և աւետեաց երկրին՝ ժողովրդեանն Իսրայելի առեալ բերէր յԱստուծոյ : Այսպէս և սոքա սրբազանքս իւրեանց բարեմիառ տնուանցն թուոյ մեզ նոր Իսրայելի աստուածատես ժողովրդեանն եկեղեցւոյ զպարգեւս աստուածատուրս և զաւետիս ՚ի յերկինս : Նորոգելով ճանապարհ հաշտարար իւրեանց 47 չարչարանօքն , և մեզ հրաւիրակք ոչ յերկիր աւետեաց , այլ ՚ի վերնաքաղաքն Սիովն մայրն սրբոց : Ոչ մոռանամ և զմեծն Եղիա ՚ի մարգարէո զկուսութեամբն հաճոյացեալ Աստուծոյ . որ և զնախանձն Աստուծոյ սաստկապէս խնդրէր և պատուհասէր զԻսրայել անողորմաբար խրատով : Սովով և երաշտով և գարձեալ հրկէզ 48 պատարագօքն զմարգարէան Բահազու խապառ կոտորէր , և յանգիմանէր զԱքայար միւսսնգամ անձրեւածին ամպովքն : Փախուցեալ լինէր յաստուածատեացն Եզարելայ ըզքառասուն տիւ , և ՚ի լեառն Աստուծոյ այսքան պահօք սրբամատոց

լեալ ճնշմամբ մարմնոյ . հոգևով
 ընդ Աստուծոյ խօսէր դէմ յանդի-
 ման և մաշկեկան ծածկէր զերեսս
 զտրհուրեալ յերեւման Աստուծոյ
 զինքն լեալ : Իսկ զի այս է Թիւ սըր-
 բեցելոցս այսոցիկ , որոց անուանա-
 կիր է և սրբոցս և պահոցս համարք :

Արդ այսպիսեօք և սոցս առաքի-
 նուԹիւնս պահօք , ջրով և հրով , և
 Թիւն քաջայարմար քառասուն . և
 սոքօք մեզ աստուածատեսուԹիւն
 յօրինի 'ի սոյն տեսակ : Լինի այսո-
 քիւք Թուովք ընծայումն անգրան-
 կացն Իսրայելի Մովսեսի օրինա-
 գրուԹեամբն , քառասնօրեայ յան-
 դիման առնել տեսուն 'ի խորանն
 սրբուԹեան պատարագօք : Որ և սո-
 քօք ոչ միայն անգրանիկք Գամրաց ,
 այլ ամենայն անձն և ամենայն ազգ
 ընծայի Աստուծոյ , և յանդիման
 կան սրբեալք և ազատեալք 'ի մե-
 ղաց սոցս բարեխօսուԹեամբ : Քան-
 զի իւրեանց օրինագրուԹեամբ և
 նահատակուԹեամբ և ջերմեռանդն
 սիրով զամենեցուն փրկուԹիւն հայ-
 ցեն յԱստուծոյ . և սոցին Թուովք

ՆԵՐԲ . Ի Ս . ՔԱՌԱՍ .

4

պահօք և մեք մաքրեալք լիցուք :
 Տէրն մեր և Աստուած Յիսուս
 Քրիստոս ինքեան մարմնովն ծնըն-
 գեամբն պատուեաց և զայս թիւ՝
 քառասնօրեայ՝ ի տաճարն բերմամբ
 ծնողացն և ընծայեալ ի ձեռն ին-
 քեան զարարածս Աստուծոյ և Հօր
 ի բարձունս : Ի սոյնչափ աւուրս
 և յեռ մկրտութեան պահեաց կե-
 նարարն մեր Քրիստոս , և զամենայն
 փորձութիւնս սատանայի յեռ պա-
 հոցն կատարման մարգկութեամբն
 աստուածապէս յաղթահարեաց :
 Մինչ կատարեաց զամենայն կիրս
 անօրէնութեան մարմնովն իւրով
 վասն մեր և զչարչարանսն խաչին և
 զթաղումն և յարեաւ ի մեռելոց և
 հաւատարիմ եղեւ աշխարհի , որ-
 պէս ուսաք յաստուածային գրոց ,
 յաւուրս քառասունս երեւեալ ա-
 շակերտացն , և ուսուցեալ նոցա
 զարժանն քարոզութիւն 49 վերա-
 ցաւ յերկինս մարմնով , և գալոց է
 միւսանգամ նովին մարմնով : Նոյն
 ինքն երիս քառասնեակս պատուե-
 լով , ընծայելովն ի տաճարին ի

գիրկան Սիմէոնի , յետ մկրտու-
թեանն պահօք և յետ յարութեանն
համբարձմամբն յերկինս : Արդ այս-
պէս խորհրդածեալ քառասնեակս
Թիւ . ութ հնգեակս և հինգ ու-
թեակս , և չորք տասնեակս և մի քա-
ռասնեակ յինքն ժողովեալ և կա-
տարեալ այսպէս Թիւս : Նեղ է տե-
սութիւն նոցա , բայց մեք ասաս-
ցուք զոր ինչ իմանամք 'ի սլատիւ
քառասնից սրբոց : Ութ հնգեակն
ասացեալ եւթն հնգեակն աշխար-
հիս այսմիկ եւթն հազար դարուցս
կենցազավարութեան կարգս : Գե-
ղեցկապէս բերէ զնմանութիւն , և
հինգ հինգ զԹիւ նոցա վտան հինգ
զգայութեան մարդկան , որով գոր-
ծի բարի և չար , և աշխարհակիր-
կեանս նոքօք յօրինի : Իսկ յետ
եւթն հնգեկացս ութերորդ հըն-
գեակն զութերորդ դարուն՝ որ է
առաջին և սկիզբն անկէտ յաւիտե-
նին քրիստոսամուտ գալստեան ըստ
գրոց և դարուց : Արդ հինգ հինգ
առ մի մի դար խորհրդածեցու քա-
ռասնեակս Թիւ . զի հնգիւք զգայ-



ութեամբք սրբապէս մատակարարեալ զկեանս աշխարհիս յեւթն դարս, յութեակն արժանի լինին նովին հնգեակ Կործարանօք անճառ վայելչութեանցն որ անկն է 50 այսմ սրբոց: Սոյնպէս և հինգ ութեակն ըստ հինգ զգայութեանցն մաքրել զութ խորհուրդսն չարութեան զհոգեկանս և զմարմնականս. որպէս սուրբ հարքն իմաստասիրեցին ՚ի գիրս: Իսկ զգայութիւնքն են այսոքիկ. նախ անտութիւն աչաց, լսելութիւն 51 ականջաց, հետտակելիք ռնգաց, շօշափելիք ձեռաց և ճաշակելիք բերանոյ. և են կրկին հոգեկան և մարմնական: Բարունեցաւ այսոքիկ և յայտնեցաւ. ասասցուք զութ խորհուրդսն, զպարզ լիցի որոց կամիցին: Սկիզբն որովայնամուլութիւն, պոռնկութիւն, արծաթսիրութիւն, տրտմութիւն, ձանձրութիւն, բարկութիւն, սնափառութիւն, ամբարտաւանսութիւն. այսոքիկ են ութ: Նոյնպէս կրկին են և սոքա, և այսոցիկ յազմեցին սուրբքն և հեր-

քեցին . և գտան հաճոյք Աստու-
 ծոյ , և բնաւ առաքինութեամբ
 հանգիտահրեշտակք : Կրէ յինքն
 քառասնեակն չորս տասնեակս . այս
 կատարելագոյն է և բարձրագոյն
 խորհուրդ , ընդ չորս կողմանս աշ-
 խարհի քարոզել զաւետարանն փրկ-
 կութեան : Ղամբարափայլ լուսով
 ջահացուցանել ընդ ոլորտս տիեզե-
 րաց զսրբոցն յիշատակ միացեալ
 ճգնութեամբ ընդ նոցունց հոգւով
 և մարմնով , մտօք և շնչով , բովան-
 գակ մաքրութեամբ զթիւ չորեքկին
 առլցեալ 'ի քառասնեակն աւար-
 տեալ չորիւք տասամբք : Ի սոսին
 սուրբ քառասնիցս թիւ կատարի և
 այլ խորհուրդ զմարգարէիցն լնուլ
 թիւ քսան և չորք . և զերկստասան
 առաքելոցն և զչորք աւետարան-
 ջացն . որպէս զի քսան և չորք և եր-
 կստասանն և չորքն լնուլ զթիւ քա-
 ռասնիցն . քանզի սոքա զմարգա-
 րէացեալն 'ի մարգարէից զՔրիս-
 տոս տեսին և ծանեան : Սոյնպէս
 և զառաքելոց քարոզեալն ընկալան
 և հաւատացին և յաւետարանջացն

լուսաւորեցան և աւետեացն հասին
հետեւելով ընդ լուսաշաւիղ պո-
ղոտայն : Եւ այսպիսի բազում խոր-
հուրդ արտայայտէ սոցա անուանց
Թիւ որքան ասացաք , և այլ եւս ա-
ռաւել՝ որ մեզ անհասանելի է . այլ
այսքան որչափ մեզ պատշաճ է :

Այ և յանուանցն գիր խորհուրդ
և կարի յոյժ զարմանալի . քանզի
քառասնիցն անուանցն գիր բովան-
գակէ միահամուռ երեք հարիւր
տասն և ութ 'ի ստոյգ օրինակաց որ
գտանիցի ճշգրիտ դեսպոտիկոն ըստ
Յունաց , յորոց և կոչումն անուանց
նոցա : Տեսցես ինձ և ստուգա-
գիւտ 52 'ի Հայոց նոյնպէս երեք
հարիւր տասն և ութ գիր . և այս
մարգարէութիւն վասն սուրբ և
մեծ ժողովոյն Նիկիայ հաւարախըն-
գիր 63 հարցն : Ինձ զարմանալի այ-
սոցիկ և իբր անսողութիւն նախա-
գուշակ . քանզի կանխագոյն եւս
էին սոքա ամօք ինչ քան զժողովն
աստուածազան , որ գումարեցան
'ի Նիկիայ՝ Կոստանդնու հրամա-
նաւ . կենաց բանին հետեւողք հա-

ւատ հաստատեցին, խոստովանու-
 թիւն սուրբ Երրորդութեանն և մի
 աստուածութեան : Որ և այս թիւ
 խորհուրդ 54 գրոց բերէ յայսպիսի
 տեսակ, որպէս զի զհարցն բերել
 զհամար, և յԵրրորդութեանն գտա-
 նիլ խորհուրդ . քանզի հարեւրքն
 երեք միաչափք, և Երրորդութիւնն
 երեք անձինս հաւասարք : Սոյն-
 գունտկ ութեւտասունքն . երիս
 վեցեակս միաթիւս, և այս նոյնպէս
 խորհուրդ . մի 'ի բազմութիւն թը-
 ւոցն հայկցիս և թիւրեացես թը-
 ւովքդ, այլ զբաժինսն միահաւասար
 տեսցես և խորհրդականեսցես 55 :
 Կատարեալ տեսցես միութեամբ
 բարժանմամբն զհաւասարութիւն
 թուոցն, և գտցես զպահչելիսն 'ի
 քառասնիցն անուանակոչութիւնսն
 և քննութիւնս :

Իմասցուք և այլ խորհուրդ օգտա-
 կարագոյն և հոգւոց մերոց փրկու-
 թիւն : Այսոցիկ սրբոց հանապազ
 տան յիշատակի սոցա 'ի սուրբ քա-
 ռամներորդ պահոցս հանդիպի, ո-
 րով և տուաւել անուանակոչութիւն



նոցա ըստ աւուրցս հոգեւորապէս
 տօնել և պարկեշտութեամբ զյղջիսւ-
 թիւն կերակրոց արապոյ աւուրցս
 և տօնիս թողեալ, թեթեւութեամբ
 ընթանալ 'ի յասպարէզ հանգիսի
 նոցա : Բախճանապէս զնոցայն ա-
 ռեալ յարացոյց 56 մեղ և օրինակ
 զգանազան տանջանան : Իբր այժմիկ
 տեսող նոցա լինելով և մարտակից,
 ընդ նոսին խոստովանութեամբ ըզ-
 ֆրիսաոս . որովք մարթի նոցա և
 պսակակից լինել և սքանչելատեօիլ
 յերկնուսա պսակացն . նախ չար-
 չարանացն հազորդելով և վշտակցե-
 լով իբրեւ զբարիոք զինուորս :

Արդ տօնեսցուք, եղբարք, զտօն
 սրբոցն և պտղաբերեսցուք տօնիս
 վայելչականս, և տացուք աւուրս
 զպարտական օրհնութիւնս արժա-
 նաւորապէս : Տեսցուք զխորհուրդ
 տօնելոյս զինչ է, և զհարգ իցէ տօ-
 նել զսրբոցն տօն : Ի նեղութիւնս
 ուրախանալ, 'ի վիշտս փառաւորել
 զԱստուած, 'ի տանջանս համբե-
 րել : Որ զփառս արգարոցն կամիցի
 առնուլ, գործովք նոցունց նմա-

նեւցի . ըստ օրինակի նոցա մարտի-
 ցէ , թէպէտ և ոչ ընդ Ագրիկո-
 զայոս , այլ ընդ ստատանայի : Ահա-
 լասիկ և մեզ առաջի կայ հանգէս և
 մարտ և կռիւ . և մրցութիւն ագոնի :
 Լուարուք և 'ի միա տուէք . արգիւ-
 նացուցէք 'ի սրտից ձերոց անգոս-
 տանս . եղիցուք պատարաստք , ելլուք
 'ի պատերազմ , մարտիցուք և յազ-
 թեացուք և յազթեալ ընկձեացուք
 զթշնամին մեր զհակառակորդն . մի
 թողցուք յոտն կալ , այլ սպանցուք :
 Քննութիւն արասցուք մտաց մերոց
 և խորհրդոց . թողցուք զբարեացն
 խորհուրդ , ստասցուք զբարեացն
 հանգէս , սրբեացուք 'ի մեզաց զան-
 ձինս խոստովանութեամբ և ապաշ-
 խարութեամբ : Այս է տօնապիտան
 յոյս . այսպէս պատուի սրբոցն յի-
 շատակ և Քրիստոս փառաւորի :
 Նայեցարուք ընդ սրբոցն չարչա-
 բանս և 'ի ժուժկալութիւն , 'ի
 վիշտս և յազթան : Դաւանեացուք
 զնոցա խոստովանութիւնն , և շա-
 հեացուք ընդ նոսա զփրկութի : Բա-
 բունիս զնոսա կալցուք անձանց մե

րոց, մանաւանդ եթէ նոքօք զՔրիստոս Աստուած մեր: Որպէս արժանն է տօնել և յանկադոյն սրբոցն, այսպէս տօնեսցուք, մի աշխարհապէս այլ ՚ի վեր քան զաշխարհ: Մի որովայնիւ փափկացեալ, այլ հուով լցեալ: Սիրեսցուք զմիմեանս. պատուեսցուք զիրեարս. մի զանձանց եւեթ խնդրեսցուք, այլ և զընկերին: Ասեմք տօնել, և զտօնին պատճառն ոչ առնումք ՚ի միտ և այնպէս տօնախմբել: Կերակրովք կարծեմք և ըմպելեօք զտօնն և կամ զարդուք պատուականաց 57: Ահաւասիկ որոց տօնն է՝ նոքա քաղցեալ և ծարաւի և մերկք և ՚ի պաղ ընկեցեալ. կարօտեալք, նեղեալք, չարչարեալ, ձուլեալ մարմնով, և պատառեալ արիւննահոս: Իսկ մեք փափկանամք, և առաւել քան ըզպէտօն, և զարդարեալ ճեմեմք և ցնծամք երկրաւորօքս: Ուստի՞ գտանիցիմք այսոքիւք տօնիչք, և կամ պատուիչք սրբոցն. այսպիսեօք ոչ եւո. սոյն և հակառակ է նոցա ճշգանցն և չարչարանացն, և ոչ միտ.

բանի ընդ նոսա : Ասան այսորիկ 'ի
բաց թողցուք զամենայն 58 ըստ եր-
կրիս խորհուրդ և զգործս չարեաց .
ապա կատարեալք լիցուք մտօք յար-
դարութիւն և 'ի սրբութիւն և 'ի
գործս բարեաց : Այս է նմանու-
թիւն նահատակացն , և վասն այսո-
րիկ յԱստուծոյ պարգեւեցաւ մեզ
ածնել զչարչարանացն օր սրբոցն և
ժառանգ գտանել հաւատոց նոցա
և գնացից . և ճանաչել զբարեպաշ-
տութեան օրէնսդրութիւնն առ Աս-
տուած հայեցողութիւն : Արդ եղ-
բարք ջանասցուք նեղ և անձուկ ճա-
նապարհաւն սրբազանիցն մտանել
'ի պատրաստեալն նոցա տեղի և
պսակեսցուք . քանզի որ զայս հան-
գէս յօրինեաց , արգարագատ է և
առանց ակնառութեան և հաւասար
ճգնողացն , հաւասար տայ զպար-
գեւն , և զոչ հաւասարսն ոչ առնէ
զուգապատիւ , այլ ըստ իւրաքան-
չիւր վաստակոցն և զվարձն : Որպէս
և ուստք յաւետարանէն որ ասա-
ցաւ 'ի տեառնէ . Գաղտց է որդի
մարդոյ փառօք Հօր իւրոյ , և յայն .

Ժամ հատուցանէ իւրաքանչիւր ըզ-
գործս իւր :

Բայց այժմ մեք որ տօնեմք այսօր
զյիշատակ քառասուն վկայիցն Աս-
տուծոյ , զմիաբանութիւն ՚ի հա-
ւատս նոցա տեսցուք , և նմանողք
լիցուք նոցա ըստ կարի մերում , Ճրգ-
նեսցուք ամենայն անդամօք . ՚ի միտ
առցուք զնոցա տանջանացն վտանգս
և նեղութիւնս : Համբարձցուք զաչս
՚ի յերկինս աղօթալի 59 արատսուօք ,
զի սրբութեամբ և առ Աստուած
հայեցողութեամբն նահատակիցի ա-
չաց տեսութիւնն , և մի յարատ հայ-
եցուածովք ՚ի գեղպատարանաց 60
բլշակնիցիմք 61 ՚ի պատուիրանացն
Աստուծոյ պահպանութեանէ : Մա-
քրեսցուք և զլսելիս , զի բան տեսան
լսելի լիցի մեզ . և մի ունկնդիր
լիցուք բանից օտարոտեաց և զա-
ղիր խօսից անընդունելեաց Աստու-
ծոյ . այլ միշտ զբարեացն զբանս
լսելով և ունկնդիր լինել առաջ
նորդաց խրատու . մի և հոտտե-
լեօք իգասցուք , որ ինչ ըստ մար-
մնական մարմաջմանցն իմանի և հա-

կառակ իւզոյ հոտոյն քրիստոսի .
 այլ հոտոտեսցուք բարւոք ՚ի հոտ
 կենաց եւզոյ՝ որ հեղեալ է ՚ի վե-
 րուսա առ ՚ի Հօրէն լուսոյ : Որպէս
 տսի եւզ անոյշ հեղեալ է անսւն քո
 ՚ի վերայ մեր , որով և օժանիմք շնոր-
 հօք Հոգւոյն սրբոյ և քրիստոնեայք
 անուանիմք : Ընգ այսոցիկ զգայու-
 թեան և բերանոյ գուռն գիցուք ,
 սովորեսցուք խօսել զարժանն Աս-
 տուծոյ , և ճաշակել զկենացն պար-
 գեւատուն . և մի ծառայել որովայ-
 նի որով ոչ արժանաւորի ծառայել
 աեռան , զի նա է մայր և սկիզբն
 պոռնկութեան և բազում չարեաց .
 այլ սահաւապիտութեամբ և հար-
 կաւոր կերակրովք բաւականա-
 ցուք : Սրբեսցուք և զձեռս յամե-
 նայն տնիրաւ գործոց . համբարձ-
 ցուք առ Արատաժ տարածմամբ ա-
 զօթից և շօշափեսցուք զբանն կե-
 նաց , գործելով զամենայն արգա-
 րութիւնս : Այսպէս իմասցուք և
 զամենայն անգամոցմաքրութիւն 62 :
 Այս է պահոց կատարելութիւն .
 որպէս ՚ի կերակրոցն արգելիմք 63

յաւուրս պահոց, նոյնպէս և յամենայն չարեաց. և որպէս ՚ի փոփոակ կերակրոց անճաշակ լինիմք յաւուրս պահոց, սոյնպէս ամենայն զգայութեամբ հեռի ՚ի չարեացն լինել և բարեացն ընդունակ և գործօնեայ: Ահա մարտիւրոսութիւն երկարաձիգ 64, ահա վկայութիւն Աստուծոյ բազմօրեայ. այսպիսեօք հաղորդի մարտիւրոսասէրն ընդ մարտիւրոսացն: Այս է տօնի սրբոցն զարդ, այս է և ջահից բորբոքումն և անուշահոտութեան բուրումն խնկոց, ողորմութիւն տնանկաց, լուսատու գիշերոյ կանթեղք, սէր առանց կեղծաւօրութեան և միաբանութիւն սրբութեամբ, մոմեղինակալս 65 ոսկիս և մոմեղէնս լուսոյ փոխանակ տկար մեղուացն գործոյ և գիւտից: Դատաստան արգար որբոց և այրեաց, և առանց ակնառութեան և կաշառոց 66, զարդարանք ոսկէզօծ զգեստուց 67 դեղնափայլ 68 և արծաթատեսակ սպիտակութեամբ: Պահք պարկեշտութեամբ և սղօթք սրբամատոյց,

արտասուլագոչ և սրտահառաչ 69 .
 մի 70 ճայթմունք և որոտք երգոց
 և պարուց և կայթմանց ձեռնաշար-
 ժուլթեանց . այլ խոնարհութիւն և
 հեղութիւն և անցոփութիւն հո-
 գեւոր քաղցրաշարժութեամբ . ըզ-
 գեստք չըջապատք բոլորեալք և
 սպիտակափայլ կոկեալ 71 և ողոր-
 կեալ և ճունչող կոշկօք ոտնատրոփ
 չըջագայութեամբ , յօնաճօճ և ա-
 չակաքաւ գիմօք : Արդ մի միայն ար-
 տաքնովքս զարդարեսցուք զտօնս և
 զպատիւ 72 սրբոցն , այլ և զհոգե-
 ւորական զարդան յօրինեսցուք . և
 այսպէս կստարեալ տօնատէրք լի-
 ցուք . բարձրացուցուք զպատիւ ա-
 ւուրս ըստ հաճութեան սրբոցն և
 հաճոյիցն Աստուծոյ : Մի զխորհրդ-
 դական թիւ քառամնօրեայ աւուրց
 պահոցն պակասեցուցուք , զի մի և
 պակասեսցի պսակն . զքառամնիւք
 ճգնեսցուք և միապէս պահեսցուք .
 մի խտորեսցի յաւուրցս յայսցանէ
 'ի բազանիս հեշտութեան , զի մի
 լուծցի և անկցի և գտցի խստան և
 ոչ համարեսցի 'ի քառասունն :

Զայս խորհրդականութիւն և վը-
 կախցն ջոկք խնդրեն 'ի մենջ և զայն
 կամին : Արդ վայելչացեալ եկեղեցի
 Աստուծոյ տօնէ զյիշատակ սրբոց
 քառասնիցն այսքան պայծառու-
 թեամբ և ցնծութեամբ երկնիւք և
 երկրաւ, որ ինչ յերկինս իմանի և
 որ ինչ յերկրի. ջրով և հրով, քրիս-
 տոսափայլ արեւաւ և լուսափայլ
 պսակոք : 'ի յերկնուստ պայծառու-
 ցեալ, 'ի յերկրէ զուարճացեալ . 'ի
 յերկնուստ պսակեալ ոչ միով միայն,
 այլ քառասնիւք . 'ի յերկրի ջուրք,
 աստեղք ջահաւորեալ, գիւտ նշխա-
 րաց գերափայլեալ . 'ի յերկնուստ
 Քրիստոսի երեւմամբ ոչ միանգամ,
 այլ երկիցս, և զգիշեր մեղացն հա-
 լածեալ 'ի յերկրէ սրբոցն ամրա-
 պահեստ խնամովքն պարածած-
 կեալ : Զայսքան և առաւել քան
 զայս ուրախութիւն կրէ քաղաքս
 Սեբաստիա . քանզի սլարծի քա-
 ռասուն ունելով յինքն արեգա-
 կունս միով լուսով ծագեալ . վասն
 որոյ և քան զբազում քաղաքս
 հռչակաւոր է և անուանի . բայց

ոչ վերջանան և այլք, զի և շնորհքն
 Աստուծոյ անզեղջ են. քանզի ուր
 և գացի մասն 'ի նոցունց, քառա-
 սունք անուանի. զի միով անուամբ
 ամենեքեան կոչեցան, և սփռեցաւ
 անուն նոցա ընդ բոլոր աշխարհս, և
 ամենեցուն եղեն շնորհք բժշկու-
 թեան և փրկութեան և պսակ հա-
 սարակաց հաւատով տօնողաց: Վասն
 որոյ և որ այսօր տօնել արժանաւոր
 եղաք, եղիցի մեղաց թողութիւն. և
 բժշկութիւն արտաժետաց և փրկ-
 կութիւն հոգւոց և քաղցրութիւն
 օգոց և ամենայն չարեաց 'ի բարիս
 փոփոխումն, և առողջութիւն 'ի
 հաւատս. թագաւորաց և զօրաց
 նոցա և հոգեւոր պետութեանց,
 սրբազանաբար և գերահրաշ աս-
 տուածպետական վսեմութեամբ
 համառօտ և ճշմարտութեամբ քա-
 ըողել ընդ բնաւ մարմին եկեղեցւոյ
 զԲանին 73 Աստուծոյ զարժանա-
 ւոր բանս. արօտ անմլաս բանաւոր
 հօտի. 'ի վայրի գալարւոջ և 'ի ջուրս
 հանգստեան հովուել, որովք անա-
 րատ պահեալք 'ի գաւիթս մօր մե-
 ներս. Ի Ս. ԲԱՌԱՍ. Ե

րոյ սրբարար Հոգւովն գրոշմամբ,
 փրկական արեամբ 'ի պահպանու-
 թիւն օծեալք, և փոփոխեալ յաս-
 տեացս ելք յերկին 'ի վերնաքա-
 ղաքն 74 Երուսաղէմ, ուր գան-
 ձեալ կան ամենայն հոգիք առ-
 տուածահաճոյիցն . յորս լիցի և
 մեղվայելել բարեխօսութեամբսրը-
 բոց վկայիցն Քրիստոսի Աստու-
 ծոյ . որում փառք ընդ Հօր 75 և
 ընդ Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և
 յաւիտեանս յաւիտենից . ամէն :



ՍԱՀՈԿ ԵՒ ՀԱՄԱԶՈՍՊ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս Ր Բ Ո Յ Ի Շ Խ Ա Ն Ա Ց Ն

Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ա Յ

Ե Ի

Ս Ա Հ Ա Կ Ա Յ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ա Ց Ն Հ Ա Յ Ո Յ

Ի ՏԱՆԷ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ



Ընդ ժամանակս թագաւորու-
թեանն Լեւոնի կայսեր, և Փլա-
բիոսի արքեպիսկոպոսի Կոստանդի-
նուպոլսի և ՚ի հայրապետութեանն
Ներսիսի Հայոց կաթողիկոսի սասա-
կացեալ զօրանայր հարստահարու-
թիւնն Տաճկաց ՚ի վերայ քրիստո-
վնէից. յոլովք քան թէ սակաւք
եղեն վկայք ՚ի Միջագետս Ասորւոց
և ՚ի կողմանս Կասպագոժկացւոց և

յԱրարիա : Եւ քանզի ոխս մթե-
 րեալս ընդ թագաւորին Յունաց ու-
 նէին պետք հարաւային բռնակա-
 լութեանն , 'ի վերայ նորա նշան
 յաղթութեան զոր կրեացն Խ-
 մայէլ 'ի կայսերէն Յունաց զօրու-
 թեամբ սուրբ խաչին . յորժամ կա-
 մեցան առնուլ զթագաւորաբնակ
 քաղաքն Կոստանդինուպոլիս , 'ի
 կողմանս Ասորոց յելանելն Խ-
 մայելի 'ի վերայ կոհակացն Ովկիա-
 նոսի անհուն բազմութեամբ զօրաց
 և զինու ամենայարմարսլատրաստու-
 թեամբ . քանզի որպէս ունի յինքեան
 յիշատակարանն զանթիւ զօրուն ըզ-
 չափ համարոյ հատոյ երկոտասան
 գրուաց չափ մանանխոյ , որք նա-
 ւաբեկեալք ջրահեղձոյց անգընգա-
 վիժակք ընկղմելութեամբ սատակե-
 ցան յամնհի ալեաց կուտակելոց .
 յետ երից աւուրց կատարելով ըզ-
 պաշտօնն 'ի սուրբ Սոփի և ընգ այգն
 ընգ առաւօտն փայտն զփայտան հա-
 րըստահարէր սաստկագոյն կործան
 մամբ քան զՄովսեսեան գաւազանն
 զՓառաւոյն . զի մեծ քան զՄով

սէս և զնորին գաւազանն է աստ :
 Իսկ վարատեալքն 'ի քրիստոսեան
 գաւազանին զօրութենէն , որք մտին
 յանրնակ տեղիս կղզեացն , զորէն
 ձկանց եզեն կերակուրք միմեանց
 վասն վտանգի սովոյն զոր կրեցին .
 'ի բարկութենէն Աստուծոյ այս
 վրէժխնգրութիւնք պատահեալք
 հասին նոցա , փոխանակ հայհոյու
 թեան թղթոյն զոր գրեցին 'ի
 խաչն Քրիստոսի և յեկեղեցի . որ
 պէս Սինաքերիմն վաղագոյն առ Ե-
 ղեկիայիւն յաւուրս Եսայեայ մար-
 գարէին : Իսկ Թագաւորն Լեւոն և
 պատրիարքն Փլարիոս մեծ գոհու-
 թիւն մատուցին Աստուծոյ հան-
 գերձ բաղմութեամբ քաղաքին և ա-
 մենայն Ասիայ . և տիեզերք ուր և
 համբաւ լոյն հասանէր յեկեղեցիս
 քրիստոնէիցն առաւել փառաւորէր
 անունն Քրիստոսի :

Ի ժամանակին յայնմիկ էր հաւա-
 տացեալ մարզպանութիւնն Համա-
 զասպայ 'ի տանէն Արծրունեաց 76 .
 սա տիրէր սեպհական տէրութեան
 վասպուրական կոչեցեալ իշխա-

նութեան, եղբարս ունելով երկուս
 որոց անուանքն ճանաչէին առաջ
 նու՛ն Սահակ և երկրորդին Մեր-
 հու՛ժան . սոքա էին արք անուանիք
 և քաջք 'ի պատերազմունս և 'ի կրօ-
 նըս և 'ի կարգս քրիստոնէութեան .
 աներկբայ և անսայթաք գնային յօ-
 ղէնս և 'ի պատուիրանս տեառն ան-
 արառք : Իսկ սկզբնաչարն սատա-
 նայ մախացեալ ընդ պատուական
 արանցն բարեհամբաւութիւն նա-
 խանձընդգէմ վառէր նոցա : Արք
 ոմանք սուտակասպառք ոլք քսու-
 թիւնս ղնոցանէ առ գլխաւորն Տաճ-
 կաց առնէին զամբաստանութիւն 77
 'ի նոցանէ խոկալ ամբաստանէին .
 ընդ որ սաստիկ զայրացմամբ իբրեւ
 զգազանս արիւնարբուս մրմուռալս
 'ի վերայ պատուական արանցն , ըս-
 կըսան խորհել վասն նոցա չարիս .
 և քանզի երկուք ոմանք էին 'ի ժա-
 մանակին յայնմիկ գլխաւորք Տաճ-
 կաց Մուսի և Ահարոն անուանք
 նոցա որդիք Մահմեդեայ , յերկուս
 բաժանեալ էին զաշխարհն զոր էին
 նուաճեալ ընդ տէրութեամբ իւ-

րեանց : Եւ էր վիճակեալ աշխարհն
 Հայոց Ահարովնի . և նա իսկ և իսկ
 փութապէս յղեաց առ հազարա-
 պետն Հայոց զոմն , որոյ անուն
 ճանաչիւր Խուզիմայ . ՚ի կասկածի
 եղեալ մի գուցէ ամբաստանու-
 թիւնքն զնոցանէ որ վասն թագաւո-
 րին Յունաց էին ՚ի գլուխ ելանի-
 ցեն : Եւ իբրեւ եկն ՚ի սահմանս
 Հայոց , փութացաւ յղեաց կոչնա-
 կանս զնոցանէ գալ նոցա առ նոսա
 սիրով խաղաղութեամբ , ոչ ինչ
 յայանելով զոր ինչ խորհեալ էին
 զնոցանէ չարիս : Իսկ նորա քանզի
 ոչ ինչ գիակին զանձին իւրեանց
 խիղճ , ելեալ գնացին աներկիւզ
 համարձակութեամբ զկնի եկելոյ
 կոչնականացն , թէպէտ և ՚ի կասկած
 լինէին ՚ի նոցա խարդախութենէն ,
 և զվերակացութիւն աշխարհին և
 զգործ իւրեանց տային ՚ի ձեռն
 Դաւթի Մամիկոնէի , և հազարա-
 պետն անց գնաց ՚ի քաղաքն Պար-
 աւաւ ընդ իւր տանելով զպատուա-
 կան նախարարսն Արծրունեաց :
 Եւ իբրեւ հասին անգր զպատուա-

կեալն վասն նոցա չարիս յայտնի
 կացուցանէր, կամ 'ի բաց կալ 'ի
 հաւատոցն Քրիստոսի, և կամ մե-
 աանել խոշտանդանօք. զի զայս
 խորհեալ նոցա կամ գառնալ յեր-
 կրրպագութենէն Քրիստոսի և 'ի
 բաց կալ 'ի հաղորդութենէն Յու-
 նաց, և կամ մեռանել խոշտանդանօք
 և այնպէս անկասկածելի մնալ նո-
 քա 'ի նոցանէ: Եւ տուեալ զնոսա
 'ի բանգ կապանօք հանդերձ, յը-
 զէր պատգամս առ նոսա զկարծե-
 ցեալ խորհուրդսն ապստամբու-
 թեան 'ի ձեռն այնր իրի բառնալ
 'ի միջոյ. և պարգեւս և պատիւս
 մեծամեծս ընդունել նոցա յարքու-
 նուսա. և եւս 'ի մեծագոյն ձգիլ
 գահակալութիւնս, և հաւատարիմ
 լինել 'ի գրան արքունի, և շքեղ և
 երեւելի ընդ ամենայն կողմանս տէ-
 րութեանն Տաճկաց զնոսա կացու-
 ցանել. և յերկրորդական կեղծա-
 ւորեալ հասուցանել պատիւ: Բայց
 քանզի հիմնացեալ էր 'ի միտս և 'ի
 խորհուրդս նոցա հաւատք սուրբ
 Երրորդութեանն 'ի վերայ առաքե-

լական վիժի հաստատանոյ, իբրեւ ըզ-
 խազս մանկանց և զառասպելս պա-
 ռականց զառ. 'ի նմանէ խոստմուն-
 արն համարէին. և իբրեւ զմեքենայ
 ինչ յամուր պարսպէ 'ի բաց գառ-
 նային առաքեալքն առ նոսա ար-
 քանեակք չարին : Դարձեալ վերրու-
 տին սպառնալիք խոշտանգանաց և
 կտտամահ տանջանք զրաւ կենաց
 նոցա առնել խոստանայր 'ի ձեռն
 չարաշջուկք գահճացն առ նոսա
 յղեալ. որում անըմբերելի միաս
 թուլամորթ վատասրտութեամբ գո-
 լով ահարկութիւնս Մերհուժանն
 այն նախ քան 'ի տանջանս մտեալ
 մերկացեալ զհաւատոյն զգեստ զառ
 'ի Քրիստոս մկրտութեան օծումն
 ձախողակի գիմնցմամբ, անյապազ
 փութով եւ գնաց յանգիման հա-
 զարսպեալին 'ի տեղի կործանմանն,
 յանձն առնոյր զօրէնսգրու-
 թիւն նոցա արագապէս թլփատել :
 Եւ նա արտաքս իբրեւ զուռն և ջա-
 մաքեցաւ փութապէս քան զթզե-
 նին որ սչ պաղարերեաց անառն
 իւրում. և ելեալ ի շխանական ճո-

խուժեամբ գալ մտանել յաշխարհն
 Վասպուրական տիրել փոխանակ
 եղբարց իւրոց :

Ձայս լուեալ Դաւիթ Մամիկո-
 նեան փուժացաւ վաղվաղակի ընդ
 առաջ նորա պատահեաց նմա և ե-
 հառ զգլուխ նորա և եբարձ զնախա-
 աինս նորա 'ի տանէն Արծրունեաց :
 Իսկ երիցս երանելիքն Համազասպ
 և Սահակ իբրեւ լուան զգլորուսն
 եղբորն իւրեանց , և զազդեցութիւն
 չարին 'ի մէջ նոցա , մեծակական ող-
 բովք դառնապէս արտասուօք , և
 անհանդուրժելի հառաչմամբ ձայն
 ողորմելի բարձրացուցանէին 'ի վեր-
 առ յոյսն իւրեանց Քրիստոս , զի մի
 գուցէ մերկացեալ լիցին 'ի նախա-
 խնամութենէ պահպանող ամբա-
 ծածուկ ձեռացն Աստուծոյ . և մի
 խրատել գունակ եղբորն Թշուա-
 ռականի , ընդ չարագծնեայ լծակ-
 ցեսցին հոգևոց , այլ զի կացցեն
 մնացեն հաստատուն 'ի հաւատման
 Քրիստոսի յորս լուսաւորեալ կըն-
 քեցան Հոգևովն սրբով : Եւ կային
 Դային 'ի բանդին . և խնդրէին 'ի

բազում ոգորմ Գրիստոսէն գտանել
պարգեւս հանգիսի մարտիրոսու-
թեան նահատակութեան :

Իսկ ամենաչարն դարձեալ բար-
ձրագոյն քան զառաջինն զարբա-
նեակն իւր ընդգէմ սրբոցն սպառ-
նալեօք և ահարկութեամբք և ողո-
քական խաբէութեամբք . զի թե-
րեւս կարասցէ 'ի վայր կործանել
զնոսա 'ի հրապոյրս պղտորս մա-
հածինս . . . օրէնսդրին իւրեանց
. . . Եւ յանդիմանակաց միմեանց
ասեան գործեալ հրապարակա-
կոյտ ամբոխիւ առ պատրանս մոլո-
րութեան միջնորդելով զայլս ոմանս
'ի նախարարացն Հայոց որք 'ի հան-
դիպումն հազարապետին ժամա-
նեալ եկեալ էին : Իսկ սրբոցն քա-
ջայուչ մտաւոր բանազինութեամբն
զառ 'ի Քրիստոս հաւատոցն և աւե-
տարանական պատմութեամբքն մի
ըստ միոջէ կարգաբանութեամբ ,
զանակզբնականութիւնն առ Հայր
և ըստ ժամանակի տնօրէնութեանն
հանգէս , և զմիասնական Եր-
րորդութեանն աստուածաբանու

Թիւն աներկեւզ համարձակու-
 թեամբ առաջի բռնաւորին համա-
 ոտ եղեալ, մինչ զարմանալ ընդ
 համարձակութիւնն նոցա մեծաւ
 հիացմամբ, յաւելեալ և հայհոյու-
 թիւն առ գլխաւորն և օրէնսգիրն
 իւրեանց փոխանակ անունկնգիր
 գոլ նոցա առ 'ի Քրիստոս հաւատո-
 ցն 'ի քարոզութենէ մարգարէիցն,
 և սրբոց առաքելոցն ուղղապատում
 վկայից աստուածութեանն Քրիս-
 տոսի :

Ընդ որ յոյժ մտապահ եղեալ
 նախարարքն ընդ սպառնալիս ակ-
 րունի ահարկութեանցն զոր եզին
 առաջի նոցա սուրբքն զասացեալն
 կենարար Փրկչին թէ Որ գայթա-
 գղեցուցանէ զմի 'ի փոքրկանցս յայտ-
 ցանէ յիս հաւատացելոց, լաւ էր
 նմա թէ կախեալ էր քար երկան
 իշոյ զպարանոցէն և ընկզմեալ 'ի
 խորս ծովուն . և գարձեալ եթէ
 լաւ էր մարգոյն եթէ չէր ծնեալ,
 և գարձեալ եթէ վայ մարգոյն յոր
 ձեռն գայցէ գայթագղութիւն : Իսկ
 բռնաւորն զայրացեալ մեծաւ տա-

ապանօք վարանէր իբրեւ զգա-
 ղանս արիւնարբուս ընդ արհամար-
 հանս առաջնորդին իւրեանց մոլո-
 րութեանն . և ընդ նախատինս կար-
 ծեցեալ օրէնսգրին իւրեանց կոր-
 ծանմանն . և յապուշ կրթեալ միտքն
 և եթէ զինչ խորհեացի չարութիւն
 զարբոցն անգիտանալ թուէր : Այ-
 սուհեան և հրաման ետ անյապազ
 զսաւ առնել կենաց նոցա . և դահ-
 ճացն առեալ տանէին ղնոսա 'ի տե-
 ղի նահատակութեանն : Իսկ նոցա
 ճեմս առեալ այսպէս արագաքայլ
 գնացիւք որպէս յառագաստ հար-
 սանեաց , որք հրաւիրեալ կոչին ան-
 արտում ուրախութեամբ առ հան-
 դէս մարտիրոսութեան գիմեալք :
 Եւ մինչքեռ զգնային և երթային նո-
 քտ , սկսան յորդորել զմիմեանս ան-
 երկեւզ համարձակութեամբ մատ-
 չել 'ի տեղի մարտիրոսական վը-
 կայսութեանն . և մի ինչ միայթ յան-
 ձին ունել հոգ տանել զկենաց .
 այսինքն զկանանց և զորդւոց , և ա-
 սեն առ միմեանս . Յուշ լիցին մեզ
 աւերակք գալստեան յաւոյն մերոյ

Գրիստոսի զոր ասացն . Եթէ ոք ե-
 թող զտուն կամ զկին կամ զորդիս
 կամ զազարակո հալածանօք հան-
 դերձ վասն իմ կամ վասն աւետա-
 րանին , եթէ ոչ առնուցու հարիւ-
 րապատիկ յաշխարհիս յայսմիկ և 'ի
 հանդերձեալն որ գալոցն է ըզ-
 կեանսն յաւիտենականս : Յուշ լի-
 ցին մեզ Պետրոսի առ Փրկիչն ա-
 սացեալքն և պատասխանեալքն 'ի
 փրկչէն . եթէ Դուք որ եկիք զկնի իմ ,
 'ի միւսանգամ գալստեանն իմում
 հատուցից ձեզ : Յուշ լիցի մեզ յոր-
 դորումն փրկչին որ ասացաւն . Ե-
 թէ ոք կամիցի զկնի իմ գալ՝ ուրա-
 ցի զանձնն և առցէ զխաչ իւր և ե-
 կեսցէ զկնի իմ : Յուշ լիցի մեզ յոր-
 դորումն . Եթէ ոք կամեսցի զանձն
 իւր կեցուցանել կորուսցէ զնա , և
 որ կորուսցէ զանձն իւր գացէ զնա :
 Յուշ լիցի մեզ ստրառնալիք և խոս-
 տաբանութիւնք փրկչին , որ խոստ-
 վանողացն և ուրացողացն են խոստ-
 մունք . մի սպասցուք երթալ զհետ
 կոչողին 'ի յաւիտենական հան-
 դիսան , առնուլ 'ի մեզ զքաղցր

ուծն , և զթեթեւ բերանն . ոչ
 խայել է աշխատասեր մշակի մեռն
 բնաճով արկանել և հայել : յե-
 սոյան : Աչ ոք զինուոր 'ի ճգունս աշ-
 ևատասիրեալ , և 'ի կարգս զինուոր
 տախանս ուրուշեալ , պատասղմունս
 աշխարհանց զինքեամբ շուրջ գիցէ .
 եղծանել զմարտնչելն ըստ օրինին ,
 և յեանեալ գտանիցի 'ի պատկողին
 հատուցմանց . մի զարհուրեացուք
 յայնցանէ որ սպանանեն զմարմինն
 և այլ աւելի ինչ ոչ կարեն առնել .
 ճամբերութեամբ մերով ստացուք
 լուգիս մեր . հայնացուք 'ի զբա-
 իլութիս հաւասար և 'ի կատարին
 Յիսուս . զի որում կալ մեալն էր
 ետզաղութիւն 'ի միառարձութեան
 սատուածութեան իւրոյ , զան մեր
 մեղաւորացս հնազանդ եղեւ մա-
 հու խաչի . ապա և մեք պարտիմք
 լանն նորա մեռանել , մանաւանդ
 թէ զան մեր իսկ . և եթէ արգարն
 ի վերայ անարգարոցս մեռաւ , ա-
 պա և մեք պարտիմք երթալ զհետ
 զիննակի հետոց մահու նորա : Մի
 սմօթ համարեացուք վիայ լինել աւ-

տուածութեան նորա մահուամբ
 մերով, զի մի և Քրիստոսս յամօր
 արասցէ զմեզ յորժամ գայցէ փա
 ռօք Հօր իւրոյ և հրեշտակաց սրբոց
 որպէս և գրեալ է : Եւ եւս բա
 զում օրինակ յորդորմանց մի ըս
 միովէ կարգեցին եզին առ մի
 մեանս . կալ մնալ հաստատուն ի
 հաւատան Քրիստոսի , բարիոք հա
 մարեւ զմեռանելն վասն սիրոյ նո
 րա , քան առ ժամանակօքս յօրա
 նալ , և արտաքս մնալ երկնաքաղա
 քացի ճօխութեան փառաց սրբոց
 Երրորդութեանն :

Երթայր զկնի նոցա և բանաւորն
 հանգերձ նախարարօքն Հայոց և
 այլ բազմամբոխ գասս ՚ի քաղաքն
 ՚ի աեսիլ նահատակութեանն սրբ
 րոցն . ձայն զկնի արձակեալ բանա
 ւորին ասէ . Ընդէր տարապարտ մե
 ռանիք անունկնդիր իմոյ քաղցահե
 ջիւն ողորական բանիցս շատացեալ
 ձեզ լսարան . գարձարուք ՚ի յա
 մառեալ իմացմանց այսի . անտեա
 և կեցջիք ընդ մեզ : Սուրբքն ասեն
 Լուսք Քրիստոսի աւերարեք

կենսածին վարդապետութեանն, և նմա ծառայեցուցաք զլսելիս մեր . որով սրբեցաւ առաջին ազտեղութիւն բանսարկուին . մի լիցի լսել մեզ դարձեալ կործանող և դառնաշունչ ձայնի քո , որ 'ի կորուստանգիւտ ձգէ զմեզ . պարգեւք քո և վայելք քեզ և նմանեաց քոց եղիցին , և մի մեզ որ հասեալ եմք 'ի վերայ ճշմարտութեանն . 'ի ճաշակմանէ Հոգւոյն սրբոյ կրթարանէ առ 'ի յընտրել զքարի և զլար . որով մահու հաճոյ թուի քեզ կատարեա զհրաման բռնաւորին քո և 'ի նմա զորջացելոյն սատանայի . միք պատրաստ եմք մեռանել իբրեւ զոչխարս վասն մեր կախեցելոյն զքիտակէ գառինն անմահի , որ բառնայ զմեզո աշխարհի :

Եւ իբրեւ հասին յասպարէզ նահատակութեանն , և գահիճքն ըզսուսերսն կազմեն ըստ հրամանի բռնաւորին . և սուրբքն կացեալ 'ի հանգիպսջ մեկուսի յամբոխէն , ծուներ կրկնեալ յորգահոս արասուզք , ազոթս արարեալ առ Քրիստ

տոս զի հասցէ յօգնականութիւն նոցա զօրացուցանել զնոսա անվեհեր մտք մատչել 'ի տեղի զինմանն բանաւոր պատարագին . և տպասաւորաց շարին մատուցեալ սրով 'ի կատարումն սրբոցն գլխաւորել կամելով ըստ հրամանի բանաւորին : Յայնժամ երիցագոյնն Համազասպ պսէ ցերանելին Սահակ . կրտսեր ըստ մարմնոյ հանգիպեալ իմում եզբայրութեանս , այժմ անգրանիկ վեկայ լինիցիս քան զիս փոքր իմն թուեցեալ առ իմով իշխանութեամբս . արդ առաջին դահանստեալ լինիջիբ առաջին քոյով մարտիւրոսա կան վկայութեամբդ . առաջին բաժակաւն զմայլեալք ուրախ լինէաք 'ի բազմահանան մարմնական խրախճանութեամբ , այժմ գու առաջարբեցեալ զբաժակ փրկութեանն Քրիստոսի և փառաւոր լիցի անուն տեառն 'ի քում նահատակութեանդ : Իսկ սուրբն Սահակ իբրեւ 'ի հրահանգարանե վարժող գաստիարակէ յառաջեալ ընդգէմ սրջն և կնքեալ զամենայն զգայա .

րանսն նշանաւ սուրբ խաչին , ա-
ռաջի սրոյն զպարանոցն խոնարհե-
ցուցեալ և դահճին ձգեալ զսուրն
եհատ զգլուխ երանելոյն :

Յայնժամ սրբոյն Համազասպայ
համբարձեալ զձեռս իւր յերկինս
ասէ . Գոհանամ զքէն հայր տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ար-
ժանի արարեր զմեզ մեռանել վասն
անուանդ քում սրբոյ , պահելով
զյոյսն մեր հաստատուն որ 'ի քեզ .
և ուրախ արարեր զմեզ մխիթարիչ
Հոգւովք քո սրբով 'ի մեզ բնակե-
լոյ , արհամարհելով զփառս անցա-
ւորս և զլքանելիս , մերկանալով ըզ-
հին մարգն և զգենուլ զնորն որ է
պատկեր Որդւոյ քո , որ հրաւի-
րեաց զմեզ 'ի կոչումն երկնաւոր
հարսանեացդ : Փառք քեզ սուրբ և
զուգահաւասար Երբորդութեանն .
որ նախաժամանեցուցեր զեզբայրն
իմ հանդիսանալ և յազթեւ հակա-
ռակորդին . և ուրախ արարեր զեա
քաժակաւ յորդասոս վտակաւ հեզ
մամբ արեամբ Սահակայ , որոյ ա-
նունն խնդութիւն թարգմանեալ է :

Թեևան շնորհս ընդգրեմ պատերազմեալացն շնորհեոցես և գրնակիչս երկրի գաղարեցուացես 'ի վեգովմանց հոգևոց հարաւային յուզմանց, որ խառվէ զմեզ. և զամենայն պետս երկրպագուաց քոց լցուացես 'ի բարեխառնութենէ օգոց և 'ի շայեկան անձրեւաց, և 'ի բաւակա նարախ անձրեւաց ջուրոց. և զօրացուացես զակարութիւն ժողովրդեան քա բովանգակ ամենայնիւ 'ի Քրիստոս. զի քա է կարողութիւն և զօրութիւն և պատիւ և վիտաք յաւիտեանս. ամեն:

Եւ խոնարհեցուցեալ երանելւոյն զգարանոցն ծունր կրկնեալ, նոյն ժամայն դահիճն ձգեալ զաւրն եհաս զգլուխ սրբոյ վիպին Հա մազասպայ: Ազբա այսպէս կատարեցան ցանկալի մահաւամբ և բարի խոստովանութեամբ, յիշատակ բարի լնողին յաշխարհի, 'ի պարծանս եկեղեցւոյ և 'ի վիտաւ սրբոյ Երբորգութեանն. յաւիտեանս յաւիտեանից. ամեն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

* Ի հնգից օրինակաց զառաջիկայս յերկրեցաք ապագիր . Հնագոյնն երկաթագիր . Երկքն ՈՂԳ . ՈՂԳ . ՌՁԶ . և մեւսն նոր : Իսկ թէ յորում ժամանակի Սիսիտնոսս այս եկաց Հայոց վարդապետ , չունիմք տակչ հաւաստեալ :

- 1 . Գրեալ էր 'ի Ճենճէրուզն . այլք զհոփն :
- 2 . Մի օրինակ բազմերանէան :
- 3 . Հնագոյնն վայաբանաւիւեան . . զի ճասփս փխրաւիւեան :
- 4 . Երկու նոր օր . կարալեալ :
- 5 . Երկք օրին . Բարեգալքան :
- 6 . Մի օրին . ճուրախան . . 'ի Քրիստոս հաւաքոցն Ռախարհուսցրդ :
- 7 . Երկու նոր օր . զհաստաբարինն :

- 43 . Մի օր . նոյն հէփ այնժ եւ հոտըն :
- 44 . Հնազոյնն եղլէլիփն :
- 45 . Երեք օր . սանայնախորհին :
- 46 . Մի օր . բախճանան :
- 47 . Երկու նորքն իւրեանց հէլլատ-
րար :
- 48 . Մի օրին . հրիիւ :
- 49 . Հնազոյնն քարազանիւնն :
- 50 . Այլապէս ըստ միոյ ՚ի նոր օր .
այլք սին է կամ անդն է կամ
օփնէ :
- 51 . Երեք օր . շահաւիւնն :
- 52 . Մի օրին . սփռափաւիւնն :
- 53 . Հնազոյնն հաւասարախնդիր :
- 54 . Երկու նորքն գրոյ խորհրդա-
բեր է :
- 55 . Մի օրին . խորհրդածեցեալ :
- 56 . Հնազոյնն յարեցոյց :
- 57 . Այլք մարմնականաց կամ մարմնոյ
պարտական ականց . . շարաշար յա-
լեալ մարմնոցն կամ շարաշարեալ շա-
րաշար յալեալ :
- 58 . Երկու օր . զամենայն երկրային
կամ երկրաւոր :
- 59 . Մի օր . արքայաւանդի ազօրիւփ :
- 60 . Մի օր . պարտականաց :


- 61 . Հնազոյնն Բլլալիդէմ :
 62 . Մի օրին . Դամատն-Թիւն :
 63 . Այլք արգիլիմ կամ արգե-
 լում :
 64 . Երեք օր . Էրկայնայիմ :
 65 . Մի օր . լուսոյ աշտանով յասկոյ
 արեոյ Բարձու Ղահիդ Գոթանով :
 66 . Երեք օր . Կաշտոսոյ . մի օր .
 Կաշտանոյ :
 67 . Հնազոյնն զգէրօրդ :
 68 . Երկու նարքն գէղնովայլ :
 69 . Մի օր . Վրեհատաւ . այլ օր .
 արքասուսահատաւ :
 70 . Այլք չունին մի և զինի այլ
 խոնարհ" :
 71 . Հնազոյնն աղիքովիտալեալ ե . .
 ոքնաբոբի :
 72 . Մի օր . զուխոս :
 73 . Հնազոյնն զԲան Աստուծոյ զար-
 ձնա-արաբան :
 74 . Երկու նարքն , Էրկատալտին :
 75 . Մի օր . և ունուլն-Թիւն ընդ
 Հօր :
 76 . Մարզպան 'ի տանէն Արծրու-
 նեաց Թէպէտեւ վկայագիրս ըզ-
 Համազասպ կոչիցէ , սահայն սչ

Յ Ա Ն Կ

ԺԲ . ՀԱՑՈՐՈՅ

Սիսիանու Հայոց վարդապետի ներբողեան 'ի սուրբ Քառա- սունան	5
Վկայաբանութիւն սրբոց իշխա- նացն Համազասպայ և Սա- հակայ	61





ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

- Ա. Բանք նախնի իմաստասիրացն Եռնաց :
- Բ. Սրբոյն Սահակայ պատմութիւն վարուց ,
Տեսիլ , Խրատք և Թուղթք :
- Գ. Յովհաննու Սարկաւազայ Ճառ յաղագս
Քահանայութեան :
- Դ. Յովհաննու Ոսկերեւանի և Գրիգորի տաղ-
կաւազատակտի ներբողեան 'ի Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ :
- Ե. Յովհաննու Սարկաւազայ , Վարդանայ
Բարձրբերդցւոյ և Յովհաննու Երզնկա-
ցւոյ ներբողեան 'ի Ս. Գրիգոր Լուսա-
ւորիչ :
- Զ | Պատմութիւն Սրբոյն ներսիսի Պարթևի
Է | Հայոց Հայրապետի :
- Ը. Վկայարանութիւն Թաղէտի առաքելոյ և
Սանդխտոյ Վուսին :
- Թ. Վկայարանութիւն Հուշանկան :
- Ժ. ներբող . յարգիս և 'ի թոռունս Լուսա-
ւորիչն :
- ԺԱ. Վարք Ս. Մեարտապայ և Եղիշի :
- ԺԲ. ներբող 'ի Ս. Քառասունն , և Վարք
Ս. Սահակայ և Համազասպայ :

